

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՍԼԵՏ

Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Գրախոսներ՝ Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Ներսիսյան
Պատմ. գիտ. թեկնածու Արմեն Կարապետյան

Խմբագիր՝ բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
Մհեր Քունուց

ՀԱՅ ԱԶԱԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿՋԲԻՆ

Աշխատանքում ներկայացվում են հայ ազգային-ազատագրական պայքարի և այդ պայքարի մարտավարության խնդիրների առանձնահատկություններն ու հաջորդականությունը 1895 թ-ից մինչև Հայաստանի Հանրապետության հռչակումը: Նախատեսված է դասախոսների, բալկավրական կրթության ուսանողների և ընթերցող լայն հասարակայնության համար:

Հայաստանի ազգային անկախության վերահաստատումը հնարավորություն ընձեռեց, ի թիվս բազում կարևորագույն նշանակություն ունեցող խնդիրների, վերագնահատել խորհրդային տարիներին հասկանալի պատճառներով անտեսված, հաճախ նաև միտումնավոր կերպով խեղաթյուրված պատմական անցքերը, ինչպես նաև ազգային կուսակցությունների, հայոց պետականության կառուցմանն ու ազատագրական պայքարին նվիրված պետական, քաղաքական եւ զինվորական գործիչների գործունեությունը: Արժանվույնս գնահատելով այդ իրողությունը՝ հարկ է ընդգծել, որ հայրենական պատմագիտության համար այսօր էլ պիտի ելակետային նշանակություն ունենա պատմական այդ ժամանակահատվածը, ինչպես նաև Հայոց Ազատամարտն առաջնորդող հայ ազգային կուսակցությունների որդեգրած մարտավարության խնդիրներն ու առանրահատկությունները օբյեկտիվ վերլուծությամբ և փաստական նյութի անկողմնակալ մեկնաբանությամբ ներկայացնելու չափանիշը:

Աշխատանքի թեման արդիական է: Այսօր հայ ժողովուրդը կանգնած է քաղաքական երկընտրանքի առջև: Հայաստանի, Ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի(Արցախ) հանրապետությունների նկատմամբ մեծ տերությունների որդեգրած վերաբերմունքի մեջ հնի համեմատ քիչ բան է փոխվել: Նրանք դարձյալ իրենց քաղաքական նպատակներից ելնելով՝ շահարկում են և շահարկելու են մեր ժողովրդի ցավոտ և կենսական խնդիրները: Ուստի միայն տիրապետող աշխարհաքաղաքական կացության սթափ գնահատմամբ ու ճիշտ կողմնորոշմամբ ու իրականությանը համահունչ կենսունակ մարտավարության որդեգրմամբ՝ հայոց երկու անկախ հանրապետությունները կարող են դիմակայել իրենց սպառնացող մարտահրավերներին:

Պատմությունը սոսկ թվերի և փաստերի իմացություն չէ: Պատմական առավել արմատական նշանակություն ունեցող դեպքերի, ինչպես նաև ազատագրական պայքարի նշանավոր գործիչներ գործունեության ուսումնասիրությունն և իմացությունն անհրաժեշտ է պատմական դասերի անկողմնակալ գնահատման, ներկան ու ապագան առավել իմաստավորված և ճիշտ կառուցելու համար: Այս նկատառումով ներկա ժամանակահատվածում, երբ հայ ժողովուրդը դարձյալ կանգնած նոր փորձությունների ու մարտահրավերների առաջ, պայքարի առավել կենսունակ մարտավա-

րություն որդեգրելու նկառունով անտարակույս ավելի քան կարևոր է անցյալի պատմական իրողությունների իմացությունն ու գնահատումը:

Հայ ժողովրդի պատմության առավել ուշագրավ, պայքարի դրամատիզմով, հերոսական մաքառումներով, ինչպես նաև ողբերգական ընթացքով հագեցած ժամանակաշրջաններից է 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայության մղած ազգային-ազատագրական պայքարը: Գաղտնիք չէ, որ հայ ժողովրդի պայքարն առաջնորդում էին հայ ազգային-ազատագրական պայքարի հենքի վրա ծնունդ առած հայ ազգային-քաղաքական կուսակցությունները (Արմենակյան, Յնչակյան և Յ.Յ. Դաշնակցություն) : Հայոց ազատամարտի պատմության ուսումնասիրությունը աներկբա մատնանշում է, որ հայ ազգային-քաղաքական կուսակցություններից Յ. Յ. Դաշնակցությունն էր այն ուժը, որը 1895 թ-ից սկսած ստանձնել էր քաղաքական առաջնորդի դերը պատմական կարևորագույն մի ժամանակահատվածում, այն է՝ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դարավերջ և 20-րդ դարասկիզբ: Անտարակույս, նրա անցած ուղին անթերի չէ, զերծ սխալներից, բայց անժխտելի են նրա նվիրումն ու զոհաբերությունը Հայոց Ազատամարտին: Ազատագրական պայքարն առաջնորդելու համար Յ.Յ.Դաշնակցությունն անհրաժեշտաբար պիտի մշակեր և ունենար ժամանակաշրջանի առանձնահատկություններին ու պահանջներին համահունչ, համակողմանիորեն փաստարկված, գործող հայեցակարգ ու նրան համահունչ մարտավարություն: Իսկ նման հայեցակարգ այդ ժամանակ կյանքի կոչելը չափազանց դժվարին խնդիր էր, քանի որ որևէ մեծածավալ և արդյունավետ գործողություն իրականացնելու համար բացակայում էր համապատասխան կայուն դաշտը, անընդհատ փոխվում էին ներքին և արտաքին պայմաններն ու հանգամանքները:

Ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրությունը աներկբա ցույց է տալիս, որ պայքարի եղանակների ու ձևերի, այն է՝ մարտավարության որդեգրման հարցում Դաշնակցությունը իր գործունեությունում փորձել է ընտրել ժամանակաշրջանի պահանջներին ու յուրահատկությունն համահունչ մարտավարություն: Փոխվում էին ներքին և արտաքին պայմաններ, հայության նկատմամբ իշխանությունների դրսևորած վերաբերմունը, համապատասխանաբար փոխվում էր Դաշնակցության մարտավարությունը:

1895 թ.-ին հայ ազգային-ազատագրական պայքարի ղեկն ստանձնած կուսակցությունների գործունեությունում սկսվում է որակական մի նոր շրջան, երբ նրանք պիտի կենսագործեին կենսական նշանակություն ունեցող այնպիսի կարևորագույն խնդիրներ, որոնք պայմանավորված էին ժամանակաշրջանի առանձնահատկությամբ ու թելադրանքով, Արևմտյան Հայաստանի ու ընդհանրապես Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող հայության իրական կացությամբ:

Սասունի 1894 թ. դեպքերից հետո, ճիշտ է, կատարվածը տեղում ուսումնասիրելու ու համապատասխան եզրահանգումներ կատարելու նպատակով եվրոպական տերությունների ներկայացուցիչներն այցելել էին կոտորածի վայրերը, սակայն անցել էին ամիսներ և Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակը ցույց էր տալիս, որ հայությանը սպառնում էին անխուսափելի կոտորածներ: Համանման իրավիճակում հայ ազգային կուսակցությունները ժամանակաշրջանի հրամայականի թելադրանքով իրենց ուշադրությունը պիտի կենտրոնացնեին հայության համար կենսական նշանակություն ունեցող խնդրի, այն է՝ հայության ինքնապաշտպանության կազմակերպման վրա, ընդսմին կյանքի կոչեին ժամանակաշրջանի պահանջներին համահունչ կենսունակ և գործող մարտավարություն: Քանի որ հայ ազգային-ազատագրական պայքարն առաջնորդելու ղեկը ստանձնել էր Դաշնակցությունը, հեևաբար նա պիտի ընտրեր տվյալ պատմական ժամակաշրջանին համահունչ գործող մարտավարություն, որպեսզի կարողանար կազմակերպել արևմտահայության ինքնապաշտպանությունը և կանխել ջարդերի սպառնալիքը:

Հ.3. Դաշնակցությունը 1-ին Ընդհանուր ժողովում ընդունած ծրագրում ոչ միայն ամրագրել էր կուսակցության «Յեղափոխական նպատակը», այլև գործունեության 11 կետերից բաղկացած մարտավարությունը (Միջոց-տաքտիկան), որոնց մեջ էին.

1. «Պրոպագանդա անել Դաշնակցութեան գլխաւոր սկզբունքների, նպատակի եւ գիտակցական վերաբերութեան համար դէպի յեղափոխական գործ...»

3. Ամեն միջոց գործ դնել թե՛ խօսքով եւ թե՛ գործով բարձրացնելու ժողովրդի յեղափոխական գործն ու ոգին...»¹:

Առաջնորդվելով Ընդհանուր ժողովի ընդունած որոշումներով՝ ԴՅԴ ասպակենտրոն կուսակցական կառույցները և դրանցում ընդգրկված գործիչներն ու անդամները պիտի աշխատեին ժողովրդի մեջ տարածել ազատության և պայքարի գաղափարները, բարձրացնեին նրա մարտական ոգին ու պայքարի տրամադրվածությունը՝ այսինքն, գաղափարական, բարոյահոգեբանական և մարտական պատրաստվածության առումով արևմտահայությանը նախապատրաստեին դիմագրավելու սպասվելիք արհավիրքներին:

3. Ժողովրդի զինում, մարտական խմբերի կազմակերպում:

Իր ընդունած ծրագրում ամրագրելով կուսակցության «Յեղափոխական նպատակը»՝ Դ.Յ. Դաշնակցությունը բնականաբար պիտի մարտավարության հարցում առանձնահատուկ ուշադրություն դարձներ մարտական խմբերի ու ժողովրդի զինման խնդիրներին:

Ըստ ԴՅԴ որդեգրած մարտավարության, անհրաժեշտ էր.

« 2. Կազմակերպել մարտական խմբեր...

4. Ամեն միջոց գործ դնել ժողովրդին զինելու:

6. Ճանապարհներ հաստատել մարդիկ եւ զենք տեղափոխելու համար...»²:

Առաջնորդվելով ընդունած մարտավարությամբ Դ.Յ. Դաշնակցությունը իր գործունեության սկզբնական շրջանից սկսած կազմակերպում և երեք հիմնական ուղղությամբ(Կարս-Էրզրում, Կարս-Խնուս-Մուշ, Կարս-Ալաշկերտ-Սասուն, ապա Սալմաստ-Վան-Շատախ և Երևան-Վան-Ախլաթ) երկիր է ուղարկել մարտական ու զինատար խմբեր³:

1895 թ. Դաշնակցության գործունեությունում սկսվում է որակական մի նոր շրջան, երբ կուսակցությունը իր դեռևս նոր ձևավորված կազմակերպական կառույցներով պիտի կենսագործեր կենսական նշանակություն այնպիսի կարևորագույն նշանակություն ունեցող խնդիրներ, որոնք պայ-

¹ ԴՅԴ ԿԱ (Հայ Կեղափոխական Դաշնակցության Կենտրոնական Արխիվ, ԱՄՆ, Բոստոն), թժ 685, գ. 2, էջ 1-2:

² Նիւթեր Դ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Բ, էջ 15:

³ Տե՛ս ԴՅԴ ԿԱ, թժ. 685, գ. 2, էջ 1-2:

մանավորված էին ժամանակաշրջանի առանձնահատկությամբ ու թելադրանքով, Արևմտյան Հայաստանի ու ընդհանրապես Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող հայության իրական կացությամբ:

Արևմտյան Հայաստանի, ինչպես նաև Օսմանյան կայսրության մյուս հայաբնակ վայրերի հայությունը զինված ու կազմակերպված չէր, ինչը նշանակում էր, որ կոտորածները շարունակվելու դեպքում պատրաստ չէր ինքնապաշտպանության: Սասունի 1894 թ. դեպքերից հետո, ճիշտ է, կատարվածը տեղում ուսումնասիրելու ու համապատասխան եզրահանգումներ կատարելու նպատակով եվրոպական տերությունների ներկայացուցիչներն այցելել էին կոտորածի վայրերը, սակայն անցել էին ամիսներ և Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակը ցույց էր տալիս, որ հայությանը սպառնում էին անխուսափելի կոտորածներ:

Գործունեության ինչպի՞սի մարտավարություն պիտի ընտրեր Դաշնակցությունը, որ կարողանար իր կարողությունների ու հնարավորությունների սահմաններում կազմակերպել արևմտահայության ինքնապաշտպանությունը և կանխել ջարդերի սպառնալիքը:

Մինչև 1895 թ. ՀՀԴ չէր գումարել մեկ այլ Ընդհանուր ժողով և 1-ին Ընդհանուր ժողովում ընդունած մարտավարությանը վերաբերող 11 կետերը մնացել էին անփոփոխ: Քանի որ Օսմանյան կայսրությունում սուլթան Աբդուլ Համիդի քաղաքականության հետևանքով հայության գլխին ծառացել էր ջարդերի սպառնալիքը, հետևաբար Դաշնակցությունը իր գործունեությունում պիտի առաջնորդվեր կամ 1-ին Ընդհանուր ժողովում ընդունած մարտավարությամբ, կամ կյանքի կոչեր ժամանակաշրջանի յուրահատկություններից բխող առավել կենսունակ մարտավարություն:

1895թ սկզբներին գումարվում է ՀՀԴ կոմիտեներ ներկայացուցիչների Ընդհանուր-ռայոնական ժողովը: Քանի որ Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակի ծայրահեղ լարվածության պատճառով նպատակահարմար չէր, որ ՀՀԴ կառույցների ներկայացուցիչները հեռանային իրենց շրջաններից, ուստի ՀՀԴ բյուրոյի որոշմամբ Ընդհանուր-ռայոնական ժողովի աշխատանքներին հրավիրվել են մասնակցելու կուսակցության կովկասյան մարմինների ներկայացուցիչները: Բնականաբար, նրանց ժողովում նրանց ուշադրությունն առավելապես պիտի

բևեռվեր կուսակցության ընդհանուր գործունեության արմատական խնդիրների վրա:

Այսուհանդերձ, ժողովականները քննարկել են այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են ոչ միայն Յ.Յ. Դաշնակցության գործունեությանն ընդհանրապես, այլև Արևմտյան Հայաստանի խնդիրներին: Ժողովում արձանագրվում է Արևմտյան Հայաստանում տիրող ծանրագույն ու տագնապալի կացության իրողությունը, բայց որոշակիորեն չի նշվում, թե ինչպիսի քայլեր պիտի ձեռնարկի կամ գործնականում ինչ կարող է կենսագործել Դաշնակցությունը, եթե Սասունի ողբերգական դեպքերը կրկնվեն հայկական մյուս բնակավայրերում:

Այսուհանդերձ, ժողովում ընդունվում են մի շարք որոշումներ, որոնցից Արևմտահայաստանում գործող կուսակցական կառույցների «Յեղափոխական գործունեությունը ուժեղացնելու միջոցներ»-կետը, կարելի է ասել, ունի մարտավարական նշանակություն: Այդ որոշումից կարելի է առանձնացնել.

1. Կարևորելով Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում գործող կուսակցական գործիչների ներկայությունն ու գործունեությունը, ժողովը որոշում է. «Գործող ազենտների թիւը բազմացնել. ամենակարելի մր անելիքներից մեկն է շատացնել Տաճկաստանում ղեկավարող, կազմակերպող ուժերի քանակությունը...»¹:

2. Տարբեր շրջաններում գործող ՀՅԴ կառույցների միջև սերտ կապ ու փոխհարաբերություն հաստատելու և հարկավոր պիտույքները, օրինակ զենք ու զինամթերք, մի վայրից մյուսը տեղափոխելու համար անհրաժեշտ էր հների կողքին ստեղծել նոր ճանապարհներ ու կայարաններ:

Ժողովի որոշմամբ ամենակարևոր ճանապարհները պիտի լինեին. «1. դէպի Սուշ տանող, 2. դէպի Վասպուրական, 3. դէպի Ալաշկերտ-Վան»:

3. Օրվա կարևորագույն հրամայականը արևմտահայությանը զինելու, զենք ու զինամթերք ձեռք բերելու խնդիրն էր: Այդ նկատառումով ժողովի որոշումներից երրորդը՝ «Ձեռքի եւ դրամական միջոցների հայթայթումը» վերաբերում է հենց վերոհիշյալ խնդրին, որին ժողովը փոքր-ինչ ավելի մեծ ուշադրություն է դարձրել:

1. Դիւան Յ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 164:

Ազատագրական պայքարն առաջնորդող ազգային-քաղաքական կազմակերպությունների, մասնավորապես Յ.Յ.Դաշնակցության ռազմա-քաղաքական գործունեության և որդեգրած մարտավարության ուսումնասիրությունն մատնանշում է, որ այն պայմանավորված էր ու, բնականաբար, չի կարող բնութագրվել համընդհանուր պատմական նշանակություն ունեցող մեծածավալ մարտական գործողություններով: Պատմական տվյալ ժամանակահատվածում Յ.Յ.Դաշնակցությունն իր ապակենտրոն կառույցները թեպետ հիմնել էր ոչ միայն Արևմտյան ու Արևելյան Հայաստանի բազմաթիվ շրջաններում, այլև օտար տերություններում և 2-րդ Ընդհանուր ժողովում ընդունել էր «ուժերու կեդրոնացումը Երկրին մէջ» որոշումը, այնուամենայնիվ, ազատագրական պայքարը մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով ձեռք չբերեց համաժողովրդական բնույթ, և, բնականաբար, միասնությունն ու անհիմն է պնդել ընդհանուր ապստամբության իրականացման հնարավորությունների մասին:

ՀՀԴ մարտավարության առավել մեծածավալ և նշանակալի մարտական գործողությունները Սասունի 1904թ. ապստամբությունն է, որն անտարակույս ավելի շուտ ինքնապաշտպանություն էր և «խանասորի արշավանք»-ը: Իրենց ընդգրկումներով, ծավալներով և ի հարկե նաև ձեռք բերած արդյունքով այդ ձեռնարկումները չափազանց հեռու լինելով ընդհանուր ապստամբության չափանիշներից ու պահանջներից, չէին կարող արմատական նշանակություն ունենալ ազատագրական պայքարում:

Պետք է շեշտել, որ ՀՀԴ մարտավարությունը չի հանգեցրել նախատեսված հանգրվանին և ունեցել է հակասական արդյունքներ: Ելակետ ունենալով համազգային հաղթանակի հասնելու գաղափարը՝ ՀՀԴ արդյունքում ունեցել է մասնակի հաղթանակներ: Սակայն դա ուներ մեղմացուցիչ հանգամանքներ, որոնցից հարկ է առանձնացնել նախ՝ այն բարդ պայմանները և աշխարհագրական միջավայրը, ուր մղվում էր այդ պայքարը, բ) ազգային-ազատագրական պայքարի փորձի պակասը, գ) մեծ տերությունների դիրքորոշումը:

Այս հանգամանքները վկայում են, որ ՀՀԴ գործունեությունից ավելի և պահանջելն այնքան էլ ճիշտ չէ:

Արևմտյան Հայաստանում գործելու Դաշնակցության որդեգրած մարտավարության առաջին շրջանը(1895-1896 թթ.) պիտի բնութագրել՝ Ինքնապաշտպանության կազմակերպման և հայդուկային կռիվների մարտավարություն: Այդ ժամանակահատվածում ազատագրական պայքարի առանցքային ու շարժիչ ուժը առանձնակի, փոքր

ընդգրկումներ ունեցող, իսկ ավելի հաճախ հայդուկային-պարտիզանական և ահաբեկչական գործողություններն էին: Ընդհանուր ապստամբության բացակայության պայմաններում ավելի են կարևորվում երկրում տեղի ունեցած հայդուկային-մարտական գործողությունները, ինքնապաշտպանական մարտերը, ինչպես նաև Արևմտահայաստանի նախանշված շրջանները մեկնող մարտական ու զինատար խմբերի մղած կռիվները, որոնք, առանց բացառության, հերոսապատումի հիասքանչ օրինակներ են:

Այդ մարտավարությունը պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով.

1. Օսմանյան կայսրությունում սուլթան Չամիդի սանձազերծած կոտորածներն արմատական փոփոխություններ ու տեղաշարժեր առաջացրին հայ իրականության և հայ ազգային- քաղաքական կուսակցությունների գործունեության մեջ:

Չամիդյան «արյունոտ» բռնապետության ժամանակահատվածում հայ ազգային- քաղաքական կուսակցությունների, մասնավորապես ՅՅԴ - գերխնդիրը, բնականաբար, պիտի լիներ արևմտահայության ինքնապաշտպանության կազմակերպումը: Այդ խնդրի կենսագործումը Յ.Յ.Դաշնակցության գործունեության մեջ անհրաժեշտաբար պետք է ձեռք բերեր ռազմավարական նշանակություն, որի իրագործման համար անհրաժեշտ էր մշակել և որդեգրել ժամանակաշրջանի առանձնահատկություններից բխող մարտավարություն:

Ա. Ապակենտրոն կազմակերպական կառույցների հիմնում: Այդ նպատակով Արևմտահայաստանի մի շարք շրջաններն են գործուղվում ՅՅԴ գործիչներ:

Ի տարբերություն հայ ազգային-քաղաքական մյուս կուսակցությունների, Յ.Յ. Դաշնակցությունը համեմատաբար ավելի լայն հնարավորություն է ձեռք բերում ապակենտրոն իր կառույցները հիմնելու Չայաստանի երկու՝ արևելյան ու արևմտյան հատվածներում, ինչպես նաև բազմաթիվ այլ երկրներում: Քանի որ Արմենական կուսակցության գործունեության շրջանակները սահմանափակված էին հիմնականում Վանի նահանգով, հենց այդ պատճառով չէր կարող խոչընդոտել ՅՅԴ կառույցների հիմնադրմանն ու ծավալմանը:

Հնչակյանների գործունեության շրջանակներն աստիճանաբար սահմանափակվում էին: Պոլսում նրանց նախաձեռնությամբ տեղի ունեցած Գում-Գափուի և Բաբ Ալիի անարդյունավետ ձեռնարկումների ու, մասնավոր, 1894թ. Սասունի ինքնապաշտպանական մարտերին շատ թույլ մասնակցության պատճառով ժողովուրդն այլևս որևէ հույս չէր կապում նրա հետ:

Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Յայրիկը, արժանվույնս գնահատելով ՅՅԴ գործունեությունը, 1896թ. սեպտեմբերի 20-ի հայրապետական ուղերձում նշում է. «...Դաշնակցութիւն կուսակցութիւնն հայկական նոր ասպետութիւնն է... Ելե՛ք, ելե՛ք, ժողովու՛րդ Յայոց, անդամագրուեցե՛ք հայկական այդ նոր ասպետութեան...»¹:

Բ. Քարոզչական-կազմակերպական աշխատանքներ:

Կուսակցական կառույցներն ու դրանցում ընդգրկված գործիչները պիտի աշխատեին ժողովրդի մեջ տարածել ազատության և պայքարի գաղափարը, բարձրացնեին նրա մարտական ոգին ու պայքարի տրամադրվածությունը:

Գ. Ժողովրդի զինում, մարտական խմբերի կազմակերպում:

Որքան էլ արգասաբեր լիներ ՅՅԴ կառույցների կազմակերպական ու քարոզչական գործունեությունը, ինքնապաշտպանության հուսալիությունն ապահովելու համար նախ և առաջ անհրաժեշտ էին մարտական ուժեր, զենք ու զինամթերք, ինչը կուսակցության առաջ ծառայած խնդիրներից, թերևս, ամենաբարդն էր ու դժվարինը: Տվյալ պատմական ժամանակահատվածում Յ.Յ. Դաշնակցությունը, որը ստանձնել էր հայության ազատագրության պայքարի առաջնորդի դերը, արևմտահայության ջարդերի սպառնալիքը կանխելու նպատակով կազմում է մարտական ու զինատար խմբեր, որոնք, մեկնելով Երկիր, պիտի զորավիգ կանգնեին իրենց արյունակիցներին:

Այս պարագայում կարելի է համաձայնել Կ. Սասունու հետևյալ պնդման հետ. «Դաշնակցութիւնը փաստօրէն, 1895-ի կոտորածներէն յետոյ, Երկրի ներսը կը սկսէ հայ յեղափոխութեան այբ ու բէն: Կորովի ու խիզախ անհատներու թիւը կաւելանար: Անհատական քաջութիւնը հետզհետէ ձեւ կը ստանար եւ կը դառնար ֆետայական խիզախ խումբ մը»²:

Անկողմնակալ գնահատելով հայդուկային կռիվների հերոսական էությունն ու հայդուկների անմնացորդ նվիրումը՝ պիտի հաշվի առնել այդ երևույթի արդյունավետության հարցը՝ ելնելով պատմականորեն հիմնավորված այն կարգախոսից, որ ամեն մի գործողություն նախ և առաջ գնահատելի է դրական արդյունքով:

Հարց է ծագում. եթե Արևմտահայաստանի զանազան շրջաններում հաստատված գործիչներն ու ՅՅԴ կազմակերպած ապակենտրոն կառույցներն ու մարտական փոքրաքանակ ուժերն ի զորու չէին առաջ բերել համընդհանուր շարժում, ապա ինչպես կարող էին մասնակի գործողություններով, ցուցական ելույթներով ու ահաբեկչությամբ իրականացնել

¹ Հայկ Աճեմեան, Յայոց Յայրիկը, Թարիգ, 1928, էջ 700:

² Սասունի Կ., Պատմութիւն Տարօն աշխարհի, էջ 591:

ամենագլխավորը՝ թոթափել Օսմանյան կայսրության դարավոր լուծն ու ազատագրել Արևմտահայաստանը:

Ինչո՞ւ էր հայ ազգային-ազատագրական պայքարն առաջնորդելու առաքելությունը ստանձնած Յ.Յ.Դաշնակցություն կուսակցությունը որդեգրել պայքարի համանման մարտավարություն:

Մ. Վարանդյանը, անդրադառնալով այդ հարցի մեկնաբանմանը, ցնորք համարելով ընդհանուր ապստամբությունը, պնդում է, որ երբեք որևէ հզոր քաղաքական կազմակերպություն չի կարողացել կենսագործել համընդհանուր ապստամբություն: Ավելին, նա վկայակոչում է Ֆրանսիայի նշանավոր հեղափոխական գործիչներ Դանտոնին, Սիրաբոյին, անգամ Իտալիայի ազգային հերոս Գարիբալդուն և Մաձձինիին, որոնք՝ չնայած իրենց գործունեության միջավայրի՝ Ֆրանսիայի ու Իտալիայի աշխարհագրական դիրքի նպաստավորությամբ, նույնպես չեն կարողացել իրականացնել համընդհանուր ապստամբություն: Միթե՞ Ռուսական կայսրության ու Թուրքիայի տիրապետության տակ գտվող հայությունը ի զորու էր իրականացնել համընդհանուր ապստամբություն:

Արտահայտելով կուսակցության մեջ այս հարցի վերաբերյալ առանձին գործիչների տեսակետները՝ Մ. Վարանդյանը նշում է. «...Եւս, առաւել ցնորք մըն էր ընդհանուր ապստամբութիւնը մեր, հայկական պայմաններուն մէջ... Ուստի ոմանք կը քարոզէին մասնակի խլրտումներու, անհատական եւ խմբական ընդլուծումներու, ահաբեկումի, տերրորի անհրաժեշտութիւնը...»¹:

Պատմական տվյալ ժամանակահատվածում մասնակի ձեռնարկումներով ու ահաբեկչական գործողություններով գործելու անհրաժեշտությունը, որպես պայքարի ընդունելի մարտավարություն, իր «Ամբոխային տրամաբանութիւն» աշխատությունում հիմնավորում է Քրիստափոր Միքայելյանը, որի տեսակետները, որպես ՅՅԴ հիմնադրի ու առաջնորդի, անկասկած կարող էին վճռորոշ նշանակություն ունենալ կուսակցության համար՝ ազատագրական պայքարի ռազմավարությունն ու մարտավարությունը մշակելու և ընդունելու գործում:

Քր. Միքայելյանը հերքում է քննադատական այն տեսակետը, ըստ որի իրենք չեն կարևորում ընդհանուր ապստամբությունը և գործում են բացառապես մասնակի շարժումներով: Մերժելով այս հարցերի կապակցությամբ իրենց ուղղված մեղադրանքը՝ Քր. Միքայելյանը նշում է. «... Ձեզ ո՞վ ասաց, որ մենք բացառապես մասնակի շարժումներ ենք առաջացնելու:

¹ Վարանդեան Մ., Գ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, էջ 96:

Ընդհանուր ապստամբութեան էք դիմում: Բայց ի՞նչ միջոցներով էք ուզում դրան հասնել: Լուռ ու մո՞ւնջ մնալով: Լուռ ու մունջ մնալով մեռնել կարելի է ներկա պարագայում եւ ոչ թէ ապստամբութեան պատրաստուել»¹:

Ազատագրական պայքարի ռազմավարությունն ու մարտավարությունը որդեգրելիս նա որպէս ելակետ արժևորում է ժամանակաշրջանի գործոնը: Նրա գնահատմամբ, հայությունն այդ ժամանակ դեռևս պատրաստ չէր և շատ-շատ հեռու էր դիմելու ընդհանուր ապստամբության: Քր. Միքայելյանը վկայակոչում է հեղափոխական առումով ավելի կազմակերպված ազգերի՝ կուբացիներին ու կրետացիներին, որոնք նույնպէս իրենց ազատագրական պայքարը սկսել էին մասնակի շարժումներով, թեև նրանց համար ավելի դյուրին էր զենք ձեռք բերելն ու շարժում սկսելը²:

Մարտական գործողությունները, այն է՝ մասնակի-հայդուկային կռիվները իրենց որակական առանձնահատկությամբ կարելի է տարբերակել.

Ա. Կռիվներ ընդդէմ թուրքակական զորախմբերի ու ոստիկանական ուժերի: Ազատագրական պայքարի մանրամասների ուսումնասիրությունը մինչևնակ ցույց է տալիս, որ այս առումով առավել նշանավոր էին Բիթլիսի նահանգում Աղբյուր Սերոբի գլխավորությամբ տեղի ունեցած հայդուկային կռիվները, որոնցից յուրաքանչյուրը լեզենդ է հիշեցնում:

Աղբյուր Սերոբի առաջնորդությամբ և ընդհանրապես այդ ժամանակահատվածում տեղի ունեցած հայդուկային կռիվներն ու իրականացրած ահաբեկչությունները չեն հակասում ՀՀԴ ռազմավարությանն ու մարտավարությանը: Ընդհակառակը, դրանք համապատասխանում են ՀՀԴ ծրագրում ամրագրված, ինչպէս նաև մինչև 1898թ. 2-րդ Ընդհանուր ժողովն ընկած ժամանակահատվածում կուսակցության վեհաժողովներում ընդունված մարտավարության պահանջներին:

Պիտի նկատել, որ հայդուկային կռիվներն առավելապէս պաշտպանական բնույթ են կրել: Մինչև «Խանասորի արշավանք»-ը մշտապէս նախահարձակ են եղել թուրքերն ու քուրդ հրոսակախմբերը, իսկ հայդուկային խմբերը հարկադրված դիմել են պատասխան գործողությունների: Բացառություն չեն կազմել Սերոբի մղած կռիվները, որոնք նույնպէս պաշտպանական բնույթ են կրել:

¹ «Դրօշակ», 1897, թիւ 14, էջ 114:

² Տե՛ս նույն տեղում:

Ըստ «Դրօշակ»-ում տեղ գտած թղթակցության՝ Բիթլիսի նահանգում հայ հեղափոխականների երևան գալու և տեղի ունեցած «խառնակությունների» մասին հաղորդագրություններ են տպագրում նաև եվրոպական թերթերը¹:

Եվրոպական թերթերում տեղ գտած այդօրինակ հաղորդագրությունները հավաստում են, որ Արևմտյան Հայաստանում հայ հեղափոխականների, հատկապես Բիթլիսի նահանգում Աղբյուր Սերոբի գլխավորած մարտական ուժերի գործողությունները, իրոք, ոչ միայն արծագանք են գտել Օսմանյան կայսրությունում, այլև իրենց վրա են բևեռել նույնիսկ եվրոպական մամուլի ուշադրությունը:

Բ. Քրդական հրոսակախմբերի դեմ մղած կռիվները:

Ազատագրական պայքարում նշանակալի են նաև այնպիսի դեպքերը, երբ հայ մարտական ուժերը հարկադրված գոտեմարտում էին քուրդ ավարառու ավազակախմբերի դեմ, որոնք պարբերաբար ներխուժում էին հայկական բնակավայրերը:

Թուրքական պատժիչ զորախմբերի ու քրդական հրոսակախմբերի դեմ Աղբյուր Սերոբի մարտախմբերի մղած կռիվները լուսաբանող սկզբնաղբյուրները միանշանակ մատնանշում են, որ դրանք իրենց յուրահատկությամբ, համարձակ ու կշռադատված մարտավարությամբ որակական առունով մի նոր, առանձնահատուկ էջ են Հայոց ազատամարտում:

Գ. Ահաբեկչական գործողություններ:

Ահաբեկչական գործողություններ ձեռնարկելու մասին որոշումը Հ.Յ. Դաշնակցությունը ընդունել է 1-ին Ընդհանուր ժողովում:

Հ.Յ. Դաշնակցությունն ահաբեկչական գործողություններ իրականացնելիս հետապնդել է տարբեր նպատակներ.

1. Թուրք իշխանությունները, հատկապես 1894թ. Սասունի դեպքերից հետո, հայ հեղափոխական կազմակերպություններին և հեղափոխական գործիչներին հայտնաբերելու նպատակով հիմնել էին գաղտնի գործակալների և մատնիչների լայն ցանց: Ազատագրական պայքարի նշանավոր բազմաթիվ գործիչներ դավաճանության ու մատնության գոհ դարձան:

Ահաբեկչական գործողություններն ուղղված էին նախ թուրք իշխանություններին ծառայող հայ դավաճանների և մատնիչների դեմ:

2. Ահաբեկչական գործողություններն ուղղված էին քրդական ցեղապետերի և բոլոր այն հրոսակախմբերի առաջնորդների դեմ, որոնք զեն-

¹ «Դրօշակ», 1898, թիվ 2, էջ 24:

քի ուժով ու բռնությամբ ձգտում էին տեղահանել հայ գյուղացուն և հաստատվել հայկական բնակավայրերում:

3. Ահաբեկչական գործողություններն ուղղված էին բարձրաստիճան պաշտոնյաների, զինվորական ու ոստիկանության աստիճանավորների ու նրանց ծառայող գործակալների դեմ:

Ռ.3. Դաշնակցության մարտավարության խնդիրներից հատկապես պիտի կարևորել նրա կառույցների գործուն մասնակցությամբ Բիթլիսի և Վասպուրական նահանգի գավառներում և Վան քաղաքում կազմակերպած ինքնապաշտպանական մարտերը:

Ռ. 3. Դաշնակցության պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա իր գործունեությունն Արևմտյան Հայաստանում առավելապես ծավալել է Բիթլիսի և Վանի նահանգներում: Բիթլիսի նահանգում ՀՅԴ գործունեությունն արժևորելիս իր նշանակությամբ առաջին հերթին պիտի առանձնացնել Աղբյուր Սերոբի հայդուկապետության շրջանը: Այդ ժամանակահատվածը առանձնահատուկ է ոչ միայն նշանավոր հայդուկապետի առաջնորդությամբ մղած հայդուկային բազում կռիվներով և ահաբեկչական գործողություններով, այլև նահանգի հայ և մահմեդական բնակչության ու անգամ իշխանությունների վրա ունեցած բացառիկ ազդեցությամբ:

Հայրենական պատմագիտությունը, բազմիցս անդրադառնալով 1894-1896թթ. հայության մղած ինքնապաշտպանական մարտերին, տակավին ինչպես հարկն է չի արժևորել Ախլաթ գավառի ինքնապաշտպանական մարտերի նշանակությունը: Համիդյան արյունոտ ժամանակաշրջանում, երբ թուրքական ջարդարարների վայրագություններին զոհ գնացին ավելի քան 300.000 հայեր, Տարոն աշխարհի Ախլաթ գավառը Արևմտահայաստանի այն եզակի շրջանն էր, որը գերծ մնաց կոտորածներից: Ի՞նչ կլինեի Ախլաթի հայության վիճակը, եթե ժամանակին, ֆիդայիների գլուխն անցած, այնտեղ չզար Սերոբը: Միանգամայն ճշմարիտ է «Դրօշակ»-ի հոդվածագիրը՝ պնդելով. «Այդ աղետալի թևականին, Հայաստանի արևնի ու կրակի տարին, Ախլաթի 27 զիւղերը Սերոբի խումբին շնորհիվ անվնաս մնացին»¹:

Ազատագրական պայքարի այդ ժամանակաշրջանում ՀՅԴ մարտավարությունը միանշանակ չէր, և այն չէր սահմանափակվում սոսկ հայդուկային կռիվների ու ահաբեկչական գործողությունների իրականացմամբ: Ազատագրական պայքարի կազմակերպման կարևորագույն խնդիրներից էր կուսակցական կառույցների հիմնումն, ու նրանց գոր-

¹Մանրամասն՝ Գևորգյան Ռ., Էջեր Հայոց Ազատամարտի, Երևան, 2005, էջ 26-131:

ծունեության ընդլայնումն ու խորացումը: Այս առումով Հ. Յ. Դաշնակցության գործունեությունը Դուրան-Բարձրավանդակում և ընդհանրապես Բիթլիսի նահանգում առավել կազմակերպված ու արդյունավետ է դառնում, երբ այդ շրջաններում սկսում է գործել Գուրգենը (Բաղդասար Մալյան): Շնորհալի կազմակերպիչ և ուսումնական (Սասունի ֆիդայիների շրջանում առավելապես մեծ հարգանք էին վայելում ուսումնական գործիչները - Հ.Գ.) Գուրգենը, հաստատվելով Ախլաթ գավառում ու դառնալով Սերոբի մերձավորագույն զինակիցը, ավելի է ընդլայնում և խորացնում ՀՀԴ կառույցների գործունեության շրջանակները:

Գուրգենի հանդամամբ ազատագրական շարժմանը պետք էր հաղորդել առավելագույն ժողովրդական և համընդհանրական բնույթ: Իսկ համընդհանուր շարժումը հաջողությամբ կենսագործելու իրական երաշխիքը ժողովրդին նախապատրաստելն ու մարտական կազմակերպություններին ակտիվություն և միասնականություն հաղորդելն էր: Վերոհիշյալ նկատառումների կենսագործման համար Գուրգենը չսահմանափակվեց միայն Ախլաթով, նրա գործունեության շրջանակները, հետզհետե տարածվելով, ընդգրկում են նաև Բիթլիսի նահանգի մյուս բնակավայրերը:

Շնորհիվ Գուրգենի, կարելի է ասել, Դաշնակցության մարտավարությունում առավելապես գերիշխողը դառնում է կուսակցական և մարտական կառույցների հիմնումը, նրանց միջոցով ժողովրդի մեջ ազատագրական պայքարի գաղափարների քարոզչությունն ու ժողովրդի կազմակերպումը: Գործունեության համանման մարտավարությամբ առաջնորդվելը ավելի շահեկան հնարավորություններ էր ընձեռում երկրում գործող ազգային-հեղափոխական կուսակցությունների կառույցներին, իրական նախադրյալներ ու հիմքեր կյանքի կոչել համընդհանուր ապստարություն կազմակերպելու համար:

Գուրգենն ու նրա զինակիցները, չնայած թուրք ոստիկանության անընդմեջ հետապնդումներին, կարողանում են կուսակցական ու մարտական մի շարք կառույցներ հիմնել Բիթլիսի նահանգի գյուղերում:

«... չորս ամիսէն վերջ,— հիշատակում է Բիթլիսցի Պողոսը,— մենք ևս որոշեցինք տասնկյօթը հոգի զույգ զույգ հրացանով, Սասուն գնալու:

Գուրգեն գրութեամբ մեզի կարգի դրաւ. տասնհինգ հոգի Ըռուսաստան գնալ, Սիմոն և Աշոտ եօթը ընկերով Ղըլաթ մնային...»¹:

Գուրգենը Սերոբի համագործակցությամբ ՀՀԴ Բիթլիսի կառույցների աշխատանքներն առավել միասնական ու արդյունավետ դարձնելու նպատակով հիմք է դնում Հ.Յ. Դաշնակցության «Սալնո-Չոր» կենտրոնական կոմիտեությանը, որի կազմի մեջ էին մտնում Ախլաթի և Բիթլիսի շրջանները :

Հարկ է փաստել, որ Երկրում, մասնավորապես Բիթլիսի նահանգում տիրող կացութունն աներկբա մատնանշում է, որ հայդուկային կռիվների մարտավարությամբ առաջնորդվելը ոչ միայն այլևս նպատակահարմար ու արդյունավետ չէր, այլև խիստ վտանգավոր: Սերոբն ու Գուրգենը որոշում են թողնել Ախլաթի շրջանն ու անցնել Սասուն: Ինչու՞ հատկապես Սասուն: Բացի նրանից, որ Սասունը իր բնական ամրակուռ դիրքով կարող էր նրանց հետագա գործունեության համար ավելի հուսալի վայր - հանդիսանալ, Սասուն մեկնելու որոշումը պայմանավորված էր նաև ՀՀԴ 1896-1897թթ. «Ընդհանուր» ռայոնական ժողովի կողմից «Ապագայ գործունեութեան տակտիկան բուն Երկրում» վերաբերյալ ընդունած հետևյալ որոշմամբ. «Խանարազի, Բերդիկի ռայոնում եղած ուժերը կենտրոնացնել Բարձրավանդակ (Սասուն), թեկուզ զենքը տեղացիներին յանձնելով»²:

Դժբախտաբար Բիթլիսի նահանգում այդ երկու անվանի գործիչների ծավալած գործունեությունը ընդհատվում է, երբ Ցրոնք գյուղում մատուռությամբ զոհվում է Գուրգենը: Իսկ ՀՀԴ կառույցներում և հատկապես ֆիդայիների շարքերում արդեն նկատելի էին դժգոհություններն ու անկազմակերպ իրավիճակը: Իսկ այդ ամենի արմատավորմանը մեծապես նպաստել է նաև այն ցավալի իրողությունը, որ այդ ճգնաժամային պայմաններում Սերոբի կողքին չգտնվեց մեկը, որը կարողանար արժանիորեն փոխարինել Գուրգենին և թույլ չտար նման արատավոր կացության հաստատման:

1. ՀՀԴ ԿԱ (Հ.Յ. Դաշնակցության կենտրոնական արխիվ, ԱՄՆ, Բոստոն), թ. 685, գ. 6, էջ 7:

1. Նիթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Բ, էջ 31:

2. Տե՛ս նույն տեղում:

ՀՅԴ վերին մարմինների գործունեությունում այս կարևորագույն հարցի նկատմամբ դրսևորած վերաբերմունքում նկատվում են որոշակի թերացում և դանդաղկոտություն: Նրանք պարտավոր էին ժամանակին տեղյակ լինել և հետևողականորեն ուշադրություն դարձնել Սասունում, առավել ևս կուսակցական կառույցներում տիրող կացությանն ու անհրաժեշտաբար համապատասխան քայլեր ձեռնարկելին, որպեսզի չմասնատվեին ու չթուլանային մեծ դժվարությամբ ստեղծված մարտական կառույցները: Մանավանդ որ արդեն կար «Ուժերու կեդրոնացում կամ Ապստամբութեան պատրաստութիւն» մասին ՀՅԴ 2-րդ Ընդհանուր ժողովի որոշումը: Այս պարագայում իր վճռական խոսքը պետք է ասեր ՀՅԴ «Դուրան-Բարձրավանդակ»-ի կենտր. կոմիտեն և, իհարկե, առաջին հերթին Հրայր Դժոխքը, որի դիրքորոշումն ու պահվածքն այդ օրերին ինչ-որ տեղ այնքան էլ հասկանալի չէին: Իսկ Սերոբն իր գինակիցների համագործակցությամբ կարողացել էր Բիթլիսի նահանգում կազմավորել այնպիսի մարտական ուժեր, որոնք իրավամբ եզակիներից էին, եթե ոչ եզակին, Հայոց ազատամարտում: Եթե պահպանվեին և ամրապնդվեին նրա առաջնորդած մարտական ուժերի միասնականությունն ու կազմակերպվածությունը, ապա անտարակույս դա կարող էր իր անգնահատելի ավանդն ունենալ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում:

Ինչպես արդեն նշվել է, Դաշնակցությունը Արևմտյան Հայաստանում առավելապես գործել է Բիթլիսի և Վանի նահանգներում: Կուսակցությունը թեպետ իր կազմակերպական կառույցները Վան-Վասպուրականում հիմնում է փոքր-ինչ ավելի վաղ, քան Տարոնում, բայց նրա գործունեությունն ու հիմնավորումը Վան-Վասպուրականում համեմատաբար ընթացել են փոքր-ինչ ավելի դժվարությամբ:

Վան-Վասպուրականում Հ.Յ.Դաշնակցությունից ավելի վաղ հաստատվել ու գործում էին արմենականները, ապա նաև հնչակյանները, որոնցից արմենականներն ավելի մեծ հեղինակություն և ազդեցություն ունեին քաղաքում ու հայկական գյուղերում: Այդ հանգամանքը որոշակի խոչընդոտներ է հարուցել, որպեսզի ՀՅԴ նույն հաջողությամբ, ինչպես Տարոնում, կարողանար կարճ ժամանակահատվածում իր կառույցները հիմնել ու տարածվել նաև Վասպուրականում:

Հ.Յ.Դաշնակցությունը, առաջնորդվելով 1-ին Ընդհանուր ժողովում ընդունած ապակենտրոն կառույցներով գործելու ռազմավարությամբ, չսահմանափակեց իր գործունեությունը միայն Հայաստանի երկու՝ արևմտյան ու արևելյան հատվածներում: Հայությանը մեծ պայքարի նախապատրաստելու անհրաժեշտության թելադրանքով՝ ՀՅԴ իր կազմակերպական

կառույցներն է հաստատում նաև Օսմանյան կայսրության հարակից հայաբնակ վայրերում, հիմնականում Վասպուրականին սահմանամերձ Սալմաստի շրջանում:

Շնորհիվ իր աշխարհագրական դիրքի ու հայ բնակչության՝ Սալմաստը Հայաստանի երկու՝ արևմտյան ու արևելյան հատվածները միմյանց շաղկապող կամուրջ էր և երկիր մեկնող հեղափոխական գործիչների, մարտական ու զինատար խմբերի հուսալի հենակետը (խարիսխ): Այդ նկատառումով հայ ազգային-հեղափոխական կուսակցությունները, այդ թվում՝ Դ.Յ.Դաշնակցությունը՝ իր կազմակերպական առաջին կառույցներն (խումբ, ենթակոմիտե, կոմիտե) է հիմնում նաև Սալմաստի գավառում, ուր առավել գործուն հենակետերից մեկը թուրքական սահմանի մերձակայքում, բայց պարսից հողի վրա գտնվող Դերիկի վանքն էր:

Դ.Յ.Դաշնակցության գործիչները, հատկապես Վազգենը (Տիգրան Տերոյան), անտեսում ու չէին կարևորում գավառներում գործելու կարևորությունը և ձգտում էին ողջ ուշադրությունն ու աշխատանքները կենտրոնացնել Վան քաղաքի վրա:

Որքան էլ Վանի գործիչները փորձեին կուսակցության հիմնական ուժերն օգտագործել Վան քաղաքում, այնուամենայնիվ, ազատագրական պայքարի ռազմավարությունն ու մարտավարությունը թելադրում էին, որպեսզի Դ.Յ.Դաշնակցության կառույցներն ու մարտական խմբերը հիմնվեին և գործեին նաև գավառներում:

Այդ նպատակով 1895 թ. օգոստոսի վերջերին 12 անդամներից բաղկացած մարտախումբը Վարդան Մեհրաբյանի առաջնորդությամբ դուրս է գալիս Վանից և ուղևորվում Հայոց Ձոր¹:

Վարդանի առաջնորդած խումբը կարողանում է ՀՅԴ կառույցներ հիմնել մի քանի գավառներում (Հայոց Ձոր, Շատախ, Գավաշ), բայց նրա արժանահիշատակ ծառայությունը Հայոց ազատամարտում Շատախ գավառի ինքնապաշտպանության կազմակերպումն է:

Պիտի ընդգծել, որ Դ.Յ. Դաշնակցությունը վերոհիշյալ գավառների ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար դեռևս չէր հասցրել զենք ու զինմանը տեղափոխել ու հանձնել այդ գավառների հայությանը: Համիդյան ջարդերի ժամանակ Դ.Յ. Դաշնակցության կողմից վերոհիշյալ գավառներ ուղարկված միակ մարտական ուժը Վարդանի գլխավորած մարտական խումբն էր, որը թեպետ իր հնարավորությունների խիստ սահմանափակությանը, այնուամենայնիվ, կարողանում է նշանակալի ավանդ ներդրել Շատախ գավառի ինքնապաշտպանության կազմակերպման գործում: Շատախի հայությունը

¹ Տե՛ս Խանասորա Վարդան, էջ 47:

շնորհիվ կազմակերպած ինքնապաշտպանության փրկվում է անխուսափելի կոտորածից:

Որպես ընդհանրացում պիտի նշել, որ Շատախի ինքնապաշտպանությունը լավագույնն ասացույցն է այն իրողության, որ փոքր-ինչ կազմակերպվածության և անգամ թույլ դիմադրության դեպքում կարելի էր փրկվել կոտորածից: Հանրահայտ փաստ է. հայ բնակչության կոտորածները թուրք իշխանությունները իրականացրել են քրդական ցեղախմբերի միջոցով: Իսկ մարտական որակներով այնքան էլ աչքի չընկնող թուրք հրոսակախմբերի ասպատակությունները կազմակերպվածության դեպքում կարելի էր վնասազերծել, անգամ փոքրաքանակ մարտական ուժեր ունենալու դեպքում, ինչը մեկ անգամ ևս փաստեցին Շատախի ինքնապաշտպանական մարտերը:

Ինչպես վկայում են սկզբնաղբյուրները, այդ ժամանակահատվածում Վանի նահանգում գործող հայ ազգային-քաղաքական կուսակցությունների կառույցներում ու գործիչների շրջանում իշխում էր այն չպատճառաբանված ու միամիտ տեսակետը, ըստ որի իբր թե թուրք իշխանությունների սանձազերծած կոտորածները չէին սպառնալու Վանի հայությանը: Այդ ժամանակահատվածում, երբ հայկական կոտորածները արդեն կենսագործվել էին Օսմանյան կայսրության գրեթե բոլոր հայաբնակ շրջաններում, ավելի քան անհասկանալի է, թե ինչ նախադրյալներով էին առաջնորդվում հայ հեղափոխական կազմակերպությունները ներկայացնող գործիչները՝ հանգելու նման հիմնազուրկ ու միամիտ եզրահանգումների:

Հունիսի 3-ին սկսվում է թուրքական կանոնավոր զորքի ու թուրք հրոսակախմբերի հարձակումը: Ավելի քան մեկ շաբաթ Վանի պաշտպանները հերոսաբար ու աննահանջ դիմադրել են թուրքական կանոնավոր զորամասերի և քրդական հրոսակախմբերի հարձակումները և թույլ չեն տվել թշնամուն ներխուժելու հայկական թաղամասեր:

Հայ ինքնապաշտպանական ուժերի դիմադրությունը ոչ միայն մեծ անհանգստություն ու անախորժություն է պատճառում նահանգի իշխանություններին, այլ նաև անգլիական հյուպատոս Ուիլյամսին:

Արմենակ Եկարյանի հավաստմամբ «Անգլիական կառավարութիւնը կը վախճար թէ միգուցէ հայերու այս դիմադրութիւնը պատրուակ կը հանդիսանայ ռուս կառավարութեան թուրքիոյ վրայ յարձակուելու. ուստի ան ջանադիր եղաւ, ոեւէ եղանակով, վերջ դնելու աւելի շուտ հայերի դիմադրութեան, քան թէ ջարդին»¹:

¹ Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 101:

Անգլիայի հյուպատոս Ուիլյամսի նախաձեռնությամբ տեղի է ունենում Վանի ինքնապաշտպանության զինվորական խորհրդի անդամների և նահանգի իշխանության ներկայացուցիչների հանդիպումը:

Վանի հերոսամարտերն արդեն մեծ արձագանք ու տարածում էին գտել, և նման պայմաններում հայ բնակչության ջարդերի կենսագործումը, մանավանդ Վան քաղաքում, ուր դեպքերին հետևում էին եվրոպական տերությունների հյուպատոսներն ու ամերիկյան միսիոներները, օսմանյան տերության համար այնքան էլ նպատակահարմար չէր: Թուրք իշխանությունների համար առավել կարևոր նշանակություն ուներ օսմանյան կայսրության անվտանգությանը սպառնացող, ըստ իրենց որակավորման՝ հայ հեղափոխականների և մարտական ուժերի ոչնչացումը: Այդ խնդիրն առավել դյուրությամբ և անաղմուկ լուծելու համար թուրք հրամանատարությունը Անգլիայի հյուպատոս Ուիլյամսին համախորհուրդ, ծրագրում է կենսագործել հայ մարտական ուժերը ոչնչացնելու ավելի դյուրին տարբերակ: Ավելի նպատակահարմար էր նրանց դուրս բերել քաղաքից ու հյուպատոսների տեսադաշտից հեռու գտնվող որևէ վայրում ոչնչացնել քուրդ աշիրեթների ուժերով: Անգլիայի հյուպատոսը հայկական կռվող ուժերին առաջարկում է թողնել Վանը և անցնել Պարսկաստան՝ ընդամին երաշխավորելով նրանց անվտանգությունը:

Հայ մարտական ուժերն անընդմեջ ընթացող մարտերում արդեն սպառել էին զինամթերքը, և կռիվները շարունակվելու դեպքում կհայտնվեին անելանելի իրավիճակում:

Արմենակ Եկարյանի վկայությամբ՝ «... երեք կուսակցութեանց պետերը եւ Վանի կարեւոր անձնաւորութիւնները խորհրդակցական ժողով մը գումարելով, որոշեցին որ կռուող երիտասարդութիւնը, իր զէնքերով, դէպի Պարսկաստան մեկնի»¹:

Վարագա սարում հավաքվածներից 600-ը, որից՝ 400 վանեցիներ, 200 գավառից եկածներ, Ս. Ավետիսյանի առաջնորդությամբ Չուխի և Բաշ Կալեի ճամփով ու Ս. Բարդուղիմեոս վանքի մոտակայքով պիտի անցնեին Պարսկաստան:

Թուրք իշխանությունները դրժելով ձեռք բերած պայմանավորվածությունը՝ կանոնավոր զորքը, քուրդ և թուրք հրոսակախմբերը հարձակվում են դեպի Պարսկաստան մեկնող վանեցիների բազմության

¹ Նույն տեղում, էջ 103:

վրա: Հայ մարտիկները, որոնց թվում՝ նաև նրանց առաջնորդ Մ. Ավետիսյանը, մարտնչելով մինչև վերջ՝ զոհվում են¹:

Գարահիսար լեռան լանջին նույն ճակատագրին են արժանանում նաև Պետոյի ու Մարտիկի գլխավորած Հ.Յ.Դաշնակցության ու հնչակյանների մարտական խմբերը:

Արմենականների կողմից Վանի «Մեծ կռիվ» կամ «Մեծ դեպք» անվանումը ստացած ինքնապաշտպանական մարտերը իրավամբ կարելի է դասել համիդյան ջարդերի տարիներին հայության մղած ամենանշանավոր և հերոսական ինքնապաշտպանական մարտերի շարքը:

Ճշմարիտ է Արտակ Դարբինյանի Վանի «Մեծ Դեպք»-ին տված հետևյալ գնահատականը. «Առանց այս «96-ի Մեծ Դեպք»-ին՝ համաշխարհային առաջին պատերազմին ընթացքին, երբ Թուրքիոյ Հայութիւնը բնաջնջման ենթարկուեցաւ. Վան պիտի չունենար իր 1915-ի «Ապրիլեան հերոսամարտը», որով փրկուեցաւ Վասպուրականի 100000 հայութիւնը...»²:

Վանի հունիսյան ողբերգական դեպքերից հետո թվում է, որ Հ. Յ. Դաշնակցության ղեկավար մարմինները, սթափ գնահատելով Արևմտյան Հայաստանում տիրող իրական կացությունը, համապատասխան հետևություններ կանեն և կընտրեն ժամանակաշրջանի յուրահատկություններին ու իրենց հնարավորություններին համահունչ գործունեության այնպիսի մարտավարություն, որը կարող էր նպաստ բերել ազատագրական պայքարին: Սակայն օգոստոսի 18-ին Վանում անսպասելի հայտնվում է Պետրոս Սերենջյանի (Բուլղարացի Պետո) գլխավորած 12 ֆիդայիներից բաղկացած մարտախումբը:

Ի՞նչ օգտակար գործ կարող էին անել ընդամենը մի քանի տասնյակ մարտիկներից բաղկացած մարտախմբերը, մանավանդ արդեն գաղտնիք չէր, որ թուրք իշխանությունները մտացածին պատճառներ էին որոնում արդարացնելու Արևմտահայաստանի գրեթե բոլոր բնակավայրերում և մասնավորապես Վանում սանձազերծած սպանող և պատրվակներ որոնում շարունակելու հայ բնակչության կոտորածը: Թվում է, թե ՀՅԴ Թավրիզի և Վանի կենտրոնական կոմիտեները, սթափ գնահատելով Արևմտյան Հայաստանում տիրող ծանրագույն կացությունը, պիտի առաջնորդվեին միանգամայն ճիշտ հակառակ, ժամանակաշրջանի յուրահատկություններին ու պահանջներին համահունչ մարտավարությամբ:

¹ Տե՛ս, ՀՅԴ ԿԱ, թծ. 1045, գ. 15, էջ 75-85:

² Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերեն, էջ 52:

Եթե այդ օրերին հայ մարտական խմբերը, մասնավորապես Վանում նոր-նոր հանգրվանած մարտախմբերը մեկնեին գավառներ ու հայ գյուղացիներին պաշտպանեին թուրք և քուրդ հրոսակախմբերի հարձակումներից, ապա միանգամայն հասկանալի ու նպատակային կլիներ նրանց գործունեության իմաստը:

Տեղեկանալով քաղաքում ֆիդայիների գտնվելու մասին՝ Վանի նահանգապետ Շաքիր փաշայի հրամանով թուրքական կանոնավոր զորաջոկատները սեպտեմբերի 10-ին հարձակվում են տներում ամրացած հայ մարտիկների վրա:

Երկու օր են տևել Վանի «Պստիկ կռիւներ» անվանումը ստացած մարտերը: Երկու օր ու գիշեր հայ մարտիկները, հայտնվելով շրջափակման մեջ և բազմիցս գրոհի ենթարկվելով թուրքական զորքի կողմից, կարողացել են դիմագրավել հակառակորդի գերակշիռ ուժերին ու անկորուստ հեռանալ վտանգված շրջանից:

Վանից հեռանալուց հետո մարտախմբերն ավելի քան երկու ամիս, մինչև Պարսկաստան անցնելը, բազում կռիվներ են մղում ու յուրաքանչյուր անգամ կարողանում են հաջողությամբ մարտնչել թշնամու մեծաքանակ ուժերի դեմ և բազում դժվարություններ հաղթահարելով՝ վերադառնում են Սալմաստ¹:

Քանի որ մարտախմբերի հրամանատարներն ու նրանց հետ առնչվող ՀՅԴ կառույցների ներկայացուցիչները համապատասխան լուրջ փաստարկներով չեն բացատրում այդ մարտախմբերի մղած կռիվների հետապնդած նպատակը, ապա կարելի է ասել, որ այդ ամենը Հ.Յ.Դաշնակցության կողմից կիրառվող մարտավարության դրսևորում էր, այն է՝ հայդուկային գործողություններ, որոնք այդ օրերին անիմաստ էին ու որևէ դրական նպաստ չէին կարող բերել արևմտահայությանը:

Բեռլինի վեհաժողովին հաջորդած ժամանակաշրջանում, երբ բովանդակ հայությունը սպասում էր հզոր տերությունների միջնորդությամբ Օսմանյան կայսրության խոստացած բարենորոգումների իրականացմանը, համիդյան բռնապետությունը կազմակերպեց մինչ այդ նախադեպը չունեցող զանգվածային ջարդեր: Սուլթան Համիդը, հնտորեն օգտագործելով այդ հարցում եվրոպական տերությունների միջև եղած տարածայնությունները և, խուսանավելով իրեն «պարտադրված» հայկական նահանգներում բարեփոխումներ իրականացնելու «Մայիսյան» ծրագրի կատարումից, շարունակում է հայակործան քաղաքականությունը:

¹ Մանրամասն՝ Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, էջ 118-168:

Արևմտահայությունն իր թույլ ու անկազմակերպ կացությամբ ի գորու չէր ինքնապաշտպանությամբ դիմագրավելու թուրք իշխանությունների հայակործան քաղաքականությանը: Միաժամանակ, հայ ազգային կուսակցությունների ու մասնավորապես Յ.Յ.Դաշնակցության ուժերից և հնարավորություններից վեր էր ծանրագույն այդ ժամանակահատվածում գորավիզ կանգնել, պաշտպանել ջարդերի սարսափներում ապրող արևմտահայությամբ: Ժամանակն ակնառու կերպով ցույց տվեց, որ Յ.Յ. Դաշնակցության ձեռնարկած քայլերը, որդեգրած մարտավարությունը «Ձուլում»-ի տարիներին, մի շարք աննպաստ պայմանների, ուժերի ու հնարավորությունների սահմանափակ լինելու պատճառով, դրական արդյունքներ չէին տալիս և չէին կարող տալ: Ազատագրական պայքարում դրական տեղաշարժեր ակնկալելու, արդյունավետ գործունեություն ծավալելու համար հարկավոր էր որդեգրել պայքարի նոր եղանակ, նոր մարտավարություն կամ, ծայրահեղ դեպքում, հրաժարվել ազատագրական պայքարից:

Ժամանակը հստակորեն ապացուցեց, որ օսմանյան իշխանությունների կողմից սանձազերծված հայկական կոտորածների ժամանակաշրջանում հայ ազգային-քաղաքական կուսակցությունների և մասնավորապես ՅՅԴ կողմից կենսագործված սոսկ պաշտպանողական բնույթի գործողությունները, այն էլ սահմանափակ քանակության, որևէ նշանակալի ազդեցություն չէին կարող գործել արյունալի դեպքերը կանխելու, արևմտահայության ջարդերի արհավիրքներից պաշտպանելու եւ Յայկական հարցը որևէ կերպ լուծելու գործում:

Գործունեության ինչպիսի՞ մարտավարություն պիտի որդեգրեր Յ.Յ.Դաշնակցությունը: Սկսած 1895 թ. մինչև «Քանկ Օտոման»-ի գրավման և «Խանասորի արշավանք»-ի որոշումը կայացնելը, ՅՅԴ գործունեությունում, հատկապես ղեկավար գործիչների նամակագրություններում և առաջարկություններում արդեն պարզորոշ նկատվում է գործունեության նոր եղանակի՝ ցուցական ելույթներով ու մարտական հուժկու ձեռնարկումներով եվրոպական տերությունների ուշադրությունը Յայկական հարցի վրա բևեռելու և նրանց գործուն աջակցությամբ Յայկական հարցը լուծելու մտայնությունն ու համոզումները: Կարելի է ընդգծել, որ դրանով Յ.Յ.Դաշնակցության գործունեությունում արդեն ամրագրվում է շրջադարձ: Անհրաժեշտ էր ձերբազատվել նախորդ մարտավարությունից և գործել առավել կենսունակ ու արդյունավետ մարտավարությամբ:

Ազատագրական պայքարի նախորդ տարիների փորձն ու Երկրում ծավալվող դեպքերի ողբերգական զարգացումը Դաշնակցություն կուսակցության շրջանում թերևս առաջին անգամ սերմանեցին պաշտպանությունից հարձակողական գործողությունների դիմելու տրամադրություններ: «Երբ,— գրում է Քրիստափոր Միքայելյանը,— 95 եւ 96 թւականներին արեան մի ամբողջ ծով էր պատել Հայաստանին եւ երբ հայութիւնը եթէ նա ստրկածին արարածների մի զանգւած չէր, պիտի բռնկւած լինէր վրէժի միակ հասկանալի զգացմունքով, պիտի դառնար վրէժի մի ամվերջ աղաղակ,— այդպիսի մի վայրկեանում, ասում ենք, լռութիւնը պիտի նշանակէր միայն ամբողջ ազգի կատարեալ բարոյական անկումը յեղափոխական գաղափարի, յեղափոխական շարժման կատարեալ սնանկութիւնը»:

ՀՅԴ Բյուրոն վճռում է ձեռնարկել հզոր, աննախադեպ գործողություն՝ եվրոպական տերությունների միջամտությամբ օսմանյան բռնապետությանը ստիպել իրականացնելու նախատեսված բարենորոգումները:

«Հ.Յ. Դաշնակցութեան ղեկաւարութիւնը,— նշում է Ս. Վրացյանը,— չէր կարող չզփտակցել տագնապի ծանրութիւնը: Եւ ահա նրա մեջ հասունանում է հարուածին հարուածով պատասխանելու միտքը»¹:

Որպես պատասխան Հայկական հարցին և հայ ազատագրական պայքարին թուրք իշխանությունների հասցրած հարվածների՝ ՀՀԴ ծրագրում է իրականացնել իր հարվածը ու այդ նպատակով «...որոշում է 1896-ին, միաժամանակ, Պոլսում և Երկրի ներսը՝ Պարսկաստանից ու Կարսի շրջանից կատարել յեղափոխական ձեռնարկներ, որոնց բնոյթը թողնում էր որոշել տեղական մարմիններին...»²:

Այդ որոշման իրականացմամբ, ՀՀԴ հայ ազատագրական պայքարում փորձում է գործել նոր մարտավարությամբ, այն է՝ անցում ինքնապաշտպանությունից հարձակողական բնույթի մարտավարության:

Պոլսում և սահմանամերձ տարածքներում (Կարս, Սալմաստ) միաժամանակ իրականացվող հեղափոխական ձեռնարկները իրենց բնույթով, ուղղվածությամբ չէին կարող համարժեք ու միատեսակ լինել ու միևնույն նպատակները հետապնդել:

1. Օրինակ, ինչպիսի՞ ուղղվածությամբ էին ընթանալու ռուս-թուրքական և թուրք-պարսկական սահմանամերձ շրջաններում տեղաբաշխված մարտա- խմբերի գործողությունները: Որոշակիորեն ի՞նչ է նշանակում

¹ Պատմագրութիւն Հ.Յ. Դաշնակցութեան, հ. Ա, էջ 305:

² Նույն տեղում:

«հարուածին հարուածով պատասխանել»: Ի՞նչ ուժերով, ինչպե՞ս և որտե՞ղ պետք է հարվածեին մարտական խմբերը: Նրանք ի՞նչ էին անելու, պիտի հարձակվեին մահմեդական բնակավայրերի, թուրքական զորանոցների և սահմանապահ զորամասերի վրա, թե մեկնեին Երկիր ու հարձակվեին առանձնահատուկ նշանակություն ունեցող վարչական կառույցների վրա և դրանով իսկ ինչ-որ չափով խառնաշփոթ իրավիճակ ստեղծեին կայսրությունում:

Սահմանամերձ շրջաններից արշավանք իրականացնելու որոշումը կատարվել է ՅՅԴ ղեկավար գործիչների փոխհամաձայնությամբ, բայց այդ պարագայում այնքան էլ եական ու վճռորոշ չէր կարող լինել այն իրողությունը, թե ի՞նչ էին ծրագրում և առաջարկում կուսակցության ղեկավար մարմիններն ու գործիչները:

2. Ծրագրած ձեռնարկները կենսագործելու համար անհրաժեշտ էին համապատասխան միջոցներ, որոնք ՅՅԴ-ն, թեկուզ և գերմարդկային ջանքեր գործադրեր, չուներ և չէր կարող ունենալ: Կարելի է աներկբա պնդել, որ եթե նույնիսկ իրականացվեին սահմանամերձ շրջաններից ծրագրած «յեղափոխական ձեռնարկները», ապա դրանք, այնուամենայնիվ, դարձյալ պիտի հետապնդեին արևմտահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակներ, քանի որ դա էր պահանջում արևմտահայության իրական կացությունը:

3. Պոլսում իրականացվելիք ձեռնարկը նույն նպատակը, որն ունեին վերոհիշյալները, չէր կարող հետապնդել: Քանի որ պոլսահայության ինքնապաշտպանության կազմակերպման խնդիրը, կարելի է ասել, հայ ազգային-քաղաքական կուսակցությունների և մասնավորապես ՅՅԴ գործունեության օրակարգից դուրս էր, ապա կայսրության մայրաքաղաքում կենսագործվող ձեռնարկը, բնականաբար, պիտի ունենար միանգամայն այլ նպատակ:

Պայքարի նախորդ տարիների փորձը Յ.Յ.Դաշակցություն կուսակցության ղեկավար մարմիններին աներկբա ապացուցել էր, որ Արևմտյան Հայաստանում իրականացրած ձեռնարկները որևէ դրական ազդեցություն չէին գործում ու իրենց չափազանց թույլ արծազանքով չէին արժանանում եվրոպական տերությունների ուշադրությանը: Կայսրության մայրաքաղաքը ավելի մոտ էր եվրոպական տերություններին և ՅՅԴ ղեկավար մարմինները հույս ունեին այդտեղ ձեռնարկվող մեծադիր գործողություններով մեծ աղմուկ հանել ու գրավել եվրոպական տերությունների ուշադրությունը:

Ազատագրական պայքարի այդ ժամանակահատվածի ուսումնասիրությունը հավաստում է, որ երրորդ ուժին ապավինելը, այն է՝ եվրոպական տերությունների աջակցությամբ ու միջամտությամբ Հայկական

հարցի լուծումը Հ.Յ. Դաշնակցության գործունեությունում հետալսու ձեռք է բերում ռազմավարական նշանակություն:

ՀՀԴ Պոլսի կենտրոնական կոմիտեի մի քանի գործիչներ, որոնց թվում Բաբկեն Սյունին, առաջարկում էին մահափորձ կազմակերպել Սուլթան Համիդի դեմ. «Շատեր ոգեւորուած էին այդ ծրագրով եւ պատրաստակամութիւն էին յայտնում զոհելու իրենց անձը: Պատրաստ էին եւ միջոցները: Կենտ. կոմիտէն ունէր բաւարար քանակութեամբ ուժանակ եւ ռումբեր՝ մակեդոնական յեղափոխականներից ստացված: Հրացանի եւ ատրճանակի, ինչպէս եւ դրամի էլ պակասութիւն չկար: Ձեռնարկը ներշնչում էր յաջոցութեան ամէն հաւանականութիւն, եւ յաջողութեան պարագային ամէնքը յուսալից էին, որ պայմանները հիմնովին կը բարեփոխուէին Թուրքիայում, իհարկէ, առաջ բերելով եւ Եվրոպական միջամտութիւն»¹:

Տվյալ ժամանակահատվածում սուլթանի մահափորձի կազմակերպումը կարող էր ծանր հետեւանքների տեղիք տալ: Բնավ չէր բացառվում, որ մահմեդական մոլեռանդ զանգվածը Համիդի սպանության պատճառով կոտորածներ սանձազերծեր հայաբնակ վայրերում և հատկապես այն գավառներում, ուր հայերը բնակչության փոքրամասնությունն էին կազմում: Վերոհիշյալի իսկությունը հավաստում է Հ.Յ. Դաշնակցության Պոլսի կենտ. կոմիտեի անդամ Վռամյանի նամակը՝ հասցեագրված «Դրօշակ»-ի խմբագրությանը. «... Խնդիրը յետաձգեցինք Սուլթանին համար, բայց հիմա ալ տարածայնութիւն կայ մեր մէջ. մեր ընկերները կը պնդեն թէ շատ անխոհեմ գործ է այդ: Մանավանդ որ Կարինէն (Երզրում) առնուած վերջին նամակին նայելով՝ հոն թուրքերը նորէն կը պատրաստուին ջարդ մը կատարելու... ծանր մեղք է ժողովրդին նոյն փորձանքին ենթարկել:

Ենթադրենք թէ մինչեւ իսկ եվրոպ. զօրքը գրաւէ քաղաքը, բայց մինչեւ այդ ըլլալը, մինչեւ նորի մը գահակալութիւնը, չէ որ այդ բոլորը կրնան կատարուիլ, ով՞ պիտի զսպէ խուժանը, համը բերանը մնացած է աւստէն. դեռ շատերը կափսոսան, որ հոն չէին, որ պէտք եղած կերպով օգտուէին այդ առիթէն»²:

¹ «Յուշապատում...», էջ 284:

² «Դիւան...», հ. 1, էջ 284:

Պոլսի ՀՀ Դաշնակցության կենտր. կոմիտեն, նկատի ունենալով սուլթան Աբդուլ Համիդի սպանության հետևանքով հայությանը սպառնացող անխուսափելի կոտորածների վտանգը, հրաժարվում է մահափորձն իրականացնելու մտադրությունից: Քանի որ, արդեն կար Պոլսում և երկրի ներսում հեղափոխական ձեռնարկներ կենսագործելու Հ.Հ.Դաշնակցության որոշումը, որոնց բնույթն ու իրականացումը վերապահվում էր կուսակցության տեղական ապակենտրոն կառույցներին, ուստի Պոլսի ՀՀԿ կենտրոնական կոմիտեն իր հիմնական նպատակը կենսագործելու դիտավորությամբ որոշում է զենքի ուժով գրավել կայսրության գլխավոր դրամատունը՝ Օտոմանյան Բանկը ու այն պայթեցնելու սպառնալիքով՝ սուլթան Աբդուլ Համիդին հարկադրել իրականացնել Եվրոպական տերությունների կողմից թուրքական կառավարությանը ներկայացված 1895թ. մայիսյան բարեփոխումների ծրագիրը:

1895 թ. օգոստոսի 14-ին 31 մարտիկներ Բաբկեն Սյունու գլխավորությամբ գրավում են Օտոմանյան բանկը և կառավարությանն ու դեսպաններին հանձնում պահանջագիրը: Բանկը գրավող մարտիկները կարողանում են հետ մղել թուրքական զորավաշտերի բազմիցս կրկնվող գրոհները, բայց տեղի տալով Պոլսում ռուսական դեսպանության թարգման Մաքսիմովի միջամտությանն ու խոստումներին, թողնում են բանկը և անձեռնմխելիության երաշխիք ստանալով՝ մեկնում են Ֆրանսիա¹:

Որոնք էին «Բանկ Օտոման»-ի գրավման ձեռնարկի և Սամաթիայի մարտերի իրական արդյունքն ու հետևանքը: Եզրակացությունը միանշանակ է. Բանկ Օտոմանի գրավմամբ չիրականացվեց Եվրոպական տերությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա բևեռելու ակնկալիքը: Ընդհակառակը, Բանկ Օտոմանին հետևեցին իշխանությունների սանձազերծած պոլսահայության ջարդերը:

Խանասորի արշավանքի կազմակերպման մտահղացումը, համաձայն արշավանքի մասին պատմող վավերագրերի, պատկանում է Նիկոլ Դումանին: Ի պատասխան վանեցիների կոտորածի, Դումանը որոշում է դիմել փոխվրեժի՝ պատժել թուրքական իշխանությունների ձեռքին կույր զործիք ծառայող քրդական ցեղախմբերին և դրանով իսկ հարկադրել նրանց ետ կանգնել ազգամիջյան ընդհարումներից:

«Վանից,- գրում է Դումանը «Դրօշակ»-ին (10 օգոստ., 96 թ. Սալմաստ),- մեր ստացած եւ արդեն ձեզ ուղարկուած նամակից ու թղթակցութիւններից կը տեսնէնք, որ քարուքանդ է դարձել ամբողջ Վասպուրականը: Վանայ զուտ յեղափոխականները լիովին ջարդուած, գաւառները աւերակ, երկիրը կողպուտի մատնուած, կոտորված (մինի-

¹ Մանրամասն տե՛ս Գևորգյան Հ., Էջեր Հայոց Ազատամարտի, էջ 291-363:

մուն) 20000 հայ: Այդչափ դառն ու տխուր են իրողութիւնները... Միւս կողմից էլ, այո՛, ես ընդունում եմ, որ կարելի է գործել յարձակումներ եւ տանել փառաւոր յաղթանակներ...¹:

Ո՞րն էր հաղթանակներ տանող Նիկոլ Դումանի մտահղացման ուղին, գործունեւթյան հին եղանակի համեմատ առավել «նպատակավոր տակտիկան», այսինքն մարտավարութիւնը:

Համաձայն ընդունված մարտավարութեան, Երկիր էին առաքվում փոքր զինախմբեր, որոնք, որպէս կանոն, բախվելով հակառակորդի կանոնավոր զորախմբերին ու քրդական հրոսակախմբերին, մեծ մասամբ անհաջողութեան էին մատնվում: Սթափ գնահատելով Երկրում տիրող իրական կացութիւնը՝ Դումանը, որպէս պայքարի միջոց, առաջարկում է այնպիսի կռիվ, որը «... պետք է լինէր շատ անելի ներկայանալի՝ թէ իր ծաւալով ու սպառազինութեամբ եւ թէ մանաւանդ՝ մարտականոթէն լաւ կազմակերպուած:

... Խմբի իրական նպատակը պիտի լինէր այսուհետեւ անելի լայնածաւալ արշաւանք կատարել՝ թշնամուն իր իսկ հողերի վրայ հարուածել ու զգացնել նրան հայ յեղափոխական հայդուկի վրէժխնդիր մարտունակութիւնը»²:

Համաձայն նրա մտահղացման, պիտի իրագործվէին ծավալով ու կազմակերպվածությամբ նախադեպը չունեցող մարտական այնպիսի գործողութիւններ, որոնք, ի տարբերութիւն բացառապէս պաշտպանողական ուղղվածութիւն ունեցող հայդուկային կռիվների, պիտի ունենային հարձակողական բնույթ: Թշնամուց վրէժխնդիր լինելու և նրան հենց իր հողի վրա հարվածելու նպատակով ձեռնարկվող արշավանքը, փաստորէն, ֆիդայական գործունեւթյան մեջ նշանավորվելու էր նոր՝ հարձակողական բնույթի մարտավարութեան հիմնադրումը: Նման արշավանքի կենսագործման մտահղացմամբ Դումանը, իրավամբ, գործնական առումով, նոր էջ բացեց հայ ազատագրական պայքարի պատմութեան մեջ:

Նա ազատագրական պայքարի համակարգում առաջնահերթ նշանակութիւն է տալիս երկու առավել կենսունակ, միմյանց լրացնող սկզբունքների, որոնք հետայսու պիտի դառնային նրա գործունեւթյան գլխավոր ելակետն ու շարժիչ ուժը:

1. Ակն ընդ ական, փոխվրէժ:

2. Հարձակողական գործողութիւններ. իր իսկ բնորոշմամբ. «... անելի լայնածավալ արշաւանք կատարել՝ թշնամուն իր իսկ հողերի վրայ հարուածել...»:

¹ Դիւան Դ.Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 271:

² Նույն տեղում, էջ 272:

Ընդգրկումով նախադեպը չունեցող մեծածավալ հարձակողական բնույթի արշավանքը իրականացնելու համար ՀՀԴ հետապնդում էր հետևյալ նպատակները.

1. Խանասորի արշավանքը փաստորեն հարձակողական բնույթի առաջին մեծածավալ գործողությունն էր, որը կոչված էր ստիպել քրդական ցեղախմբերին հետ կանգնել ազգամիջյան բախումներից և մարտական ու զինատար խմբերի Երկիր մուտք գործելու համար ստեղծել առավել բարվոք պայմաններ:

2. 1895 թ. ջարդերից և 1896 թ. Վանի դեպքերից հետո հայությունը հուսալքված էր ու հոգեպես ընկճված: Արշավանքի հաջողությամբ իրականացումը ոչ միայն սարսափ կտարածեր քրդերի շրջանում, այլ նաև կոգեշնչեր հայությանը:

3. Արշավանքի բարեհաջող ավարտը մեծապես կնպաստեր հայության շրջանում Հ.Հ. Դաշնակցության հեղինակության բարձրացմանը:

4. Եվրոպայի ուշադրությունը բևեռել Հայ դատի պաշտպանության վրա:

Ձեռնարկել հարձակողական մեծածավալ մարտական գործողություն, դա նշանակում էր կյանքի կոչել պայքարի նոր մարտավարություն, այն է՝ անցում կրավորական պաշտպանությունից հարձակողական բնույթի մարտավարությամբ: Իսկ հայ ազատագրական պայքարում հարձակողական բնույթի մարտավարությամբ գործիչը մասին դեռևս չկար հայ ազգային-քաղաքական կուսակցություններ, մասնավորապես Դաշնակցության վերին մարմինների կողմից ընդունված համապատասխան որոշում:

Իր ծավալով ու ընդգրկումներով, մինչ այդ իրագործված բոլոր մարտական ձեռնարկումներին զգալիորեն գերազանցող հարձակողական բնույթ ունեցող արշավանքի կազմակերպման համար, անհրաժեշտ էին հսկայական դրամական միջոցներ, հարյուրավոր ռազմիկներ ու մեծ քանակության զենք և զինամթերք:

Արշավախմբի կենսագործման իրական երաշխիք կարող էին տալ միայն Հ.Հ. Դաշնակցության վերին մարմնի (բյուրոյի) ղեկավար ընկերները, որոնց հետ հանդիպելու և նրանց իր ծրագրերին հաղորդակից դարձնելու առաքելությամբ՝ Դումանը 1896 թ. նոյեմբերին մեկնում է Թիֆլիս, ուր, հանդիպելով Հ.Հ. Դաշնակցության պարագլուխ Քրիստափոր Միքայելյանին, շարադրում իր մտահղացման բովանդակությունը և կարողանում է հիմնավորել փոխվրեժի նպատակով կազմակերպվող արշավանքի անհրաժեշտությունը:

Նույն թվականի դեկտեմբերի 27-ին Թիֆլիսում գումարվում է Հ.Հ. Դաշնակցության Ընդհանուր ժողով, ուր կուսակցության ապագա գործունեության մարտավարությանը (տակտիկա) վերաբերող հարցե-

րի թվում քննարկվում է նաև արշավանքի կազմակերպմանը նվիրված Դուսնանի ներկայացրած ծրագիրը: Ի դեպ, այդ ժողովը, ընդհանուր ժողովի չափանիշներին չբավարարելու պատճառով, հետագայում դասվում է ռայոնական ժողովների շարքին:

Քննարկելով օրակարգում ներկայացրած հարցերը՝ ժողովականները կուսակցության «Ապագա գործունեության տակտիկական» հարցի վերաբերյալ ընդունում են երկու որոշում.

«1. Բաւականնալ միայն հայրուկային խմբեր մտցնելով երկրի մէջ: Այդ խմբերի գործն է լինելու անհանգստացնել թէ՛ տաճիկ կառաւարութեան եւ թէ՛ մահմեդական տարրին, յարձակումներ գործել ճանապարհների վրայ, անրանալ լեռներում եւ միշտ հեռու մնալ ժողովրդից, որպէսզի կոտորածների եւ ճնշումների առիթ չլինի:

2. Մեծ արշավանք (Դուսնանի առաջարկությունն է - 3. Գ.):

ա) Խանարազի, Բերդիկի ռայոնում եղած ուժերը կենտրոնացնել Բարձրաւանդակ (Սասուն), թէկուզ զէնքը տեղացիներին յանձնելով:

բ) Վրեժատանում (Թավրիզ, Սալմաստ - 3. Գ.) պարտադիր ուժ (զէնք եւ մարդիկ) պահել եւ յարմար դէպքում մեծ արշավանք գործել սահմանից:

գ) Վրեժատանում արշաւանքի անհրաժեշտ պատրաստութիւններ տեսնելուց յետոյ, աւելացած զէնքը մի կերպ Շամ (Վան) ուղարկել, գոնէ տեղացիների ձեռքով»:

Ընդունելով «Մեծ արշաւանք» կազմակերպելու մասին որոշումը՝ ժողովն այնուամենայնիվ հստակ չի սահմանում արշավանքի ձեռնարկման ու իրականացման ստույգ ժամկետը և ծանուցման կարգով ընդունում է եւս մի. «Դրանց մանրամասնութիւնը եւ իրագործելը թողնում է տեղական կոմիտեներին» որոշումը, որը հետագայում ավելի է խորացնում արշավանքի նկատմամբ տարբեր դիրքորոշում ունեցող գործիչների միջև եղած տարածայնություններն ու հակասությունները:

Իր ընդգրկումով նախադէպը չունեցող մեծածավալ հարձակողական բնույթի արշավանքը իրականացնելու համար 3.3. Դաշնակցությունը հետապնդում էր հետևյալ հիմնական նպատակները.

1. Խանասորի ապագա արշավանքը, փաստորեն, առաջին մեծածավալ գործողությունն էր, որը կոչված էր վրեժ լուծելու թշնամուց՝ հազարավոր հայ նահատակների, մասնավորապես՝ ուխտադրժորեն կոտորված Վանի պաշտպանների արյան դիմաց:

3այ ազգային-ազատագրական պայքարի վերածննդի առաջին իսկ օրից, բազմաթիվ հեղափոխական գործիչները՝ Օսմանյան կայսրության դէմ պայքարի միասնական ճակատ կազմելու նպատակով, բազմիցս փորձում էին զինական դաշն կնքել նաև քրդական ցեղախմբերի հետ,

բայց այդ ուղղությամբ նրանց գործադրած ջանքերը հիմնականում անցնում էին ապարդյուն: Քրդական ցեղախմբերը, բացառապես տուրք տալով թուրք իշխանությունների խոստումներին, հարմար գործիք էին դառնում Օսմանյան կառավարության ձեռքին՝ ընդդեմ հայության: Եվ ժամանակը ապացուցեց, որ քրդերի հետ դաշնակցության միակ հուսալի միջոցը զենքն է: Ուստի, Խանասորի արշավանքը կոչված էր, պատժելու միջոցով, ստիպելու առավել ռազմատենչ և հայատյաց քրդական ցեղախմբերին հետ կանգնել ազգամիջյան բախումներից և մարտական ու զինատար խմբերի երկիր մուտք գործելու համար ստեղծել առավել բարվոք պայմաններ:

Ընդհանուր ժողովի կողմից այդ որոշումը Նիկոլ Դումանի մտահղացումն է՝ փոխվրեժ, «ակն ընդ ական»:

2. 1895 թ. ջարդերից և 1896 թ. Վանի ողբերգական դեպքերից հետո, հայությունը հուսալքված էր ու հոգեպես ընկճված: Արշավանքի հաջող իրականացումը պետք է ապացուցեր, որ դեռևս չի մեռել հայ ժողովրդի մարտական, ազատության ու պայքարի ոգին: Ստեղծված չափազանց ծանր իրավիճակում անհրաժեշտ էր ոգեշնչել, պայքարի կոչել համիդյան արյունոտ ջարդերից հուսահատ, հոգեկան մղձավանջով համակված հայությունը:

3. Եվրոպայի ուշադրությունը բևեռել Հայ Դատի պաշտպանության վրա: Արշավանքին զուգընթաց, որոշված էր Բանկ Օտոմանի գրավման տարեդարձի օրը ռմբային պայթյուններ կատարել Կ.Պոլսում:

ՀՅԴ Ընդհանուր ժողովի կողմից թեպետ ընդունվել էր Մեծ արշավանքի կազմակերպման մասին որոշումը, բայց նրա իրականացման հարցում եղել են տարածայնություններ:

«Բոլոր տաճկահայ ընկերները,- նշում է Ս. Սարուխանյանը,- շատ քիչ բացառութեամբ, դեմ էին արշաւանքին: Նրանց հետ համակարծիք էին մեր ղեկավար ընկերներից Երւանդը (Իշխան Արղութեան), Վարդանը, օր. Սաթենիկը: Արշաւանք ցանկացողները 25-30 հոգի կըլինէին: Նրանց գլուխ կանգնած էր Նիկոլը (Դուման) եւ բժիշկ Օհանեանը»¹:

Հ. Արղությանն ու նրա կողմնակիցները գտնում էին, որ մարտական ուժերն ու զենքը պետք է օգտագործել ոչ թե նման արշավանքներ կազմակերպելու համար, այլ, ավելի նպատակահարմար կլինի, եթե եղած միջոցները օգտագործվեին բուն երկրում, անցնել ուղղակի Վան²:

¹ «Հայրենիք ամս., 1945, մարտ-ապրիլ, էջ 97:

² Տե՛ս նույն տեղում:

Դուճան-Յոսիպի Արղուքյան հակասությունը տարածվելով համա-
կուն է ողջ զինվորներին՝ բաժանելով նրանց հակառակորդ երկու խմբե-
րի:

Անորոշ և լարված իրավիճակը շարունակվել է ամիսներ: Արշավանքի
կազմակերպման հարցում «Նիկոլակյաններ և Երևանդակյաններ»-ի միջև
արմատավորված տարածայնությունները պարզելու և նրանց միջև համե-
րաշխություն հաստատելու նպատակով, ՅՅԴ բյուրոն Սալմաստի շրջան է
գործուղում Յարություն Շահրիկյանին, որը հիմք ընդունելով Ընդհանուր
Ժողովի որոշումը «... պահանջեց գործադրել Ընդհ. ժողովի որոշումը եւ
դրա համար դրոշ ժամանակ տւեց»¹:

Արշավանքի մասնակիցները ՅՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Շահրիկյա-
նի մասնակցությամբ պիտի ընտրեին արշավախմբի հրամանատարական
կազմը: Շահրիկյանն անսպասելիորեն արշավախմբի հրամանատար է
հռչակում Վարդանին, որը մինչ այդ համամիտ չէր արշավանքի կազմա-
կերպմանը և ոչ մի նպաստ չէր բերել նախապատրաստական աշխա-
տանքներին: Իսկ արշավախմբի իրական կազմակերպիչ ու հրամանա-
տարի հիմնական հավակնորդ Դուճանը ընտրվում է հիսնապետ:

Յ. Շահրիկյանի վճիռը բացարձակապես անարդար էր և, ինչպես
կհաստատվի հետագայում, նաև գործի ընդհանուր շահերին չհամապա-
տասխանող ու վնասակար:

Անդրադառնալով հիշյալ դեպքերին Յ.Յ. Դաշնակցության նշանավոր
ներկայացուցիչներից մեկը՝ Մալխասը, գրում է. «... Ամենատաղանդավոր
զինվորականն ու կազմակերպիչը Նիկոլ Դուճանն էր: Խանասորի արշա-
վանքը իր ամբողջ ծանրաբեռմամբ կը նստի Նիկոլի ուսերուն: Ջարմանա-
լի անհետևողականութեամբ, այն մարդը որ գլուխ բերավ մեծ գործը, որ
ամբողջ զլխով բարձր էր մնացած խմբապետներէն, հավաքական ընտրու-
թեամբ հազիվ յիսնապետ մը լինելու արժանացավ, թեւ կռվի ժամանակ
եւ մանավանդ նահանջի շրջանին՝ իսկական ղեկավարն ու առաջնորդն
էր... »²:

Պահպանվել է արշավախմբի կազմը ներկայացնող տեղեկագիրը, որ-
տեղ անուն առ անուն նշված են բոլոր մասնակիցները: Յամաձայն տեղե-

¹ Նույն տեղում, մայիս-յունիս, 101-102:

² Մալխաս, Ապրումներ, հ. 1, էջ 166:

կազրի՝ արշավախումբը բաղկացած էր 249 մարտիկներից, որոնցից 30-ը Սևբարեցի Սաքոյի գլխավորած հեծյալներն են¹:

Հուլիսի 25-ի վաղ առավոտյան զինական արշավախումբը, մարտական ջոկատների բաժանված, հարձակվում է Խանասորի դաշտում վրանավորված մազրիկցիների վրա: Մարտի ընթացքում սպանվում են հարյուրավոր քրդեր: Շարաֆ բեկին հաջողվում է կնոջ շորերով ծպտված փախչել:

Եթե ընդհանրացնենք և արժևորենք ժամանակին մեծ աղմուկ հանած Խանասորի արշավանքն իր նշանակությամբ, ապա պիտի նկատել.

1. Եթե արշավանքը դիտենք որպես փոխվրեժի նպատակով իրականացված գործողություն, ապա այն կարելի է անվանել հաջողված, թեև՝ ոչ լիովին: Հայդուկային կռիվների պատմության մեջ առաջին անգամ հայկական սովոր մարտական խումբը, ձերբազատվելով կրավորական ինքնապաշտպանությունից, ձեռնարկեց հարձակողական գործողություն և թշնամուն ջախջախեց հենց իր որջում:

2. Հարձակողական բնույթի գործողությունները (Բանկ Օտոման, Խանասորի արշավանք) նույնպես էական որևէ ազդեցություն չգործեցին, դույզն-ինչ չփոխեցին Հայկական հարցի նկատմամբ եվրոպական տերությունների վերաբերմունքը:

Հայդուկային-պարտիզանական մասնակի մարտական գործողությունները, չնայած իրենց հերոսականությանը, չէին կարող դրական և արդյունավետ փոփոխություններ մտցնել արևմտահայության կյանքում: Հարձակողական բնույթի մարտական-ցուցական գործողությունները (Բանկ Օտոման, Խանասորի արշավանք) նույնպես որևէ էական ազդեցություն չգործեցին, դույզն-ինչ չփոխեց Հայկական հարցի նկատմամբ եվրոպական տերությունների դրսևորած վերաբերմունքը: Ժամանակաշրջանն ու ազատագրական պայքարի փորձը թելադրում եւ մատնանշում էր վերանայել, արդեն պատմության գիրկն անցած, գործունեության եղանակներն ու ձևերը եւ առաջնողվել առավել կենսունակ ռազմավարությամբ ու մարտավարությամբ: 1898թ. տեղի ունեցած ՀՅԴ 2-րդ Ընդհանուր ժողովն, ի թիվս այլ որոշումների, ընդունում է եւս մեկը. «...ուժերու կեդրոնացումը երկրին մէջ, ցոյցը Պոլիս եւ ծովեզերեայ քաղաքները, եւ մերժե-

¹ Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թժ. 1648, գ. 10:

լով ֆէտայական ասպատական գործունեութիւնը՝ ընդունեց մարտական-զինամարզական խումբեր կազմակերպելու ծրագիրը»¹:

Փաստորեն, այդ որոշմամբ Յ.Յ. Դաշնակցութիւնը հրաժարվում է նախկին ռազմավարութիւնից եւ մարտավարութիւնից եւ ընդհանուր ապստամբութիւն կազմակերպելու համար ուժերը կենտրոնացնում է երկրի առավել կարևոր նշանակութիւն ունեցող վայրերում:

ՀՀԴ մի շարք գործիչներ (Հրայր Դժոխք, Նիկոլ Դուման, Գուրգեն, Վարդգէս, Աշոտ Երկաթ, Վահան և այլք) ձգտում էին խուսափել ժամանակավրէպ, ազատագրական պայքարին նպաստ չբերող անարդյունավետ ձեռնարկումներ իրականացնելու մարտավարութիւնից և կուսակցութեան ուժերը կենտրոնացնել ընդհանուր ապստամբութիւն կազմակերպելու վրա: Պիտի նշել, որ եթէ ընդհանուր ապստամբութեան կազմակերպումն անտարակույս չափազանց բարդ, իսկ Հայաստանի պարագայում գրեթէ անիրագործելի խնդիր էր, ապա հնարավոր էր արևմտահայութեան անաղմուկ, գաղտնի զինումն ու այդ մարտավարութեամբ ավելի հուսալի ինքնապաշտպանութեան կազմակերպումը:

Ընդհանուր ապստամբութիւն կազմակերպելու աշխատանքները, ինչպէս արդեն նշվել է, ՀՀԴ գործունեութիւնում սկսվել են 1898 թ. ՀՀԴ 2-րդ Ընդհանուր ժողովից հետո: Այսուհանդերձ, ՀՀԴ գործունեութիւնում գերիշխում էր հայդուկային-մասնակի գործողութիւններով Եվրոպական տերութիւնների ուշադրութիւնը Հայկական հարցի վրա բնեռելու մտայնութիւնը: Արդյունքը՝ ահաբեկչական մի քանի գործողութիւններն էին ու Առաքելոց վանքի կռիվը: Դաշնակցութեան կիրառած նման մարտավարութիւնը հանգեցրեց 1904թ. ապստամբութեան: Կարելի է աներկբա պնդել, որ Սասունի 1904 թ. ապստամբութիւնը պիտի բնութագրել որպէս վաղաժամ ու թույլ կազմակերպված ձեռնարկում: Ապստամբութիւնը, որն իրականում վերածվեց ինքնապաշտպանութեան, թեպէտ բազմաթիվ հերոսական էջեր գրեց ազատագրական պայքարի պատմութեան մեջ, սակայն ավարտվեց պարտութեամբ, և աշխարհի գերիզոր տերութիւններից և ոչ մեկը որևէ ուշադրութեան չարժանացրեց տեղի ունեցող իրադարձութիւնները ու իր բողոքի ձայնը չբարձրացրեց ի պաշտպանութիւն Հայ Դատի և զոհաբերվող հայութեան:

Հարկ է ընդգծել, որ 1894 թ. ինքնապաշտպանական մարտերը, երբ Սասունն առանց որևէ կողմնակի աջակցութեան օսմանյան բռնապետութեան դեմ մարտնչում էր՝ ապավինելով միմիայն իր սեփական ուժերին, ա-

¹ Նիւթեր Յ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Բ, էջ 59:

վելի մեծ արձագանք առաջացրին, քան 1904 թ. ՀՀԴ գլխավորած ապստամբությունը:

Այն ժամանակ Եվրոպական տերությունների ներկայացուցիչները կատարված դեպքերը գոնե ձևականորեն տեղում ուսումնասիրելու նպատակով, այնուամենայնիվ, ժամանել են Սասուն, իսկ 1904 թ. դեպքերից հետո փորձ անգամ չեն կատարել կրկնելու այդ ձևականությունները: Վերոհիշյալ իրողությունը ՀՀԴ 4-րդ Ընդհանուր ժողովում խոստովանում է Անդրանիկը՝ նշելով. «Սասունը 1894-ին՝ հրացանով է կռուել միայն, բայց այն ժամանակ նա ավելի արձագանք տուեց, քան 1904-ին»¹:

Եթե Սասունի ապստամբությունը ունեցել է դրական արդյունք, ապա դա վերաբերում է ազգային-ազատագրական պայքարին զինվորագրվող սերունդների գաղափարական ու բարոյական դաստիարակությանը:

Ազատագրական պայքարի մարտավարության դրսևորման առավել ընդունված եղանակներից մեկը մարտական և զինատար խմբերի կազմակերպումն ու նրանց՝ Երկրի զանազան շրջաններ ուղարկելու ձեռնարկումներն էին:

Չնայած թուրք իշխանությունների ու ռուսական սահմանապահ զորքերի հարուցած արգելքներին, Հ.Յ. Դաշնակցությունը մեծ ջանքեր գործադրելով՝ կազմակերպում և Կարսի, Սալմաստի շրջաններում է կենտրոնացնում մարտական ու զինատար խմբեր:

Հարց է ծագում. եթե Հ. Յ. Դաշնակցությունը տեղյակ էր թուրք իշխանությունների ձեռնարկումների և միաժամանակ հայության ու հայ հեղափոխական կազմակերպությունների նկատմամբ ցարական կառավարության դրսևորած թշնամական վերաբերմունքի մասին, ապա ինչո՞վ էր պայմանավորված նրա այդօրինակ մարտավարությունը:

1. Ընդհանուր ժողովների որոշումները:

Մարտական ու զինատար խմբերի կազմավորման և նրանց Արևմտահայաստանի նախատեսված շրջաններն ուղակելու մասին ՀՀԴ 1-ին Ընդհանուր ժողովի որոշումը հաստատվել է 2-րդ ու նաև 3-րդ Ընդհանուր ժողովների կողմից: Համաձայն 3-րդ Ընդհանուր ժողովի որոշման՝ «Նայելով ձեռնարկներու բնաւորութեան, խմբերը կրնան ըլլալ մեծ կամ շատ փոքր, բայց ցանկալի է որ ամէ մէկ խումբ բաղկացած ըլլայ ոչ աւելի քան 30 հոգի: Այս վերջին որոշումը ժողովը կարելոր համարեց այն տեսակետով, որ կարելի կըլլայ շատ խմբեր կազմակերպել:

¹ Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Գ, էջ 111:

Բոլոր այդ ձեռնարկները պիտի դասաւորուին Սասնոյ կռուին տեւողութեան համեմատ եւ տեղի չպիտի ունենան միաժամանակ»¹:

2. Սասունի ապստամբութեան նկատմամբ հայութեան դրսևորած վերաբերմունքը: Յայ ազտագրական պայքարում մարտական և զինատար խմբերի գործողութիւններն առավել զանգվածային բնույթ են կրել հենց Սասունի ապստամբութեան օրերին: Բազմաթիւ հայորդիներ գալիս էին Կովկաս և Երկիր մեկնելու նպատակով զինվորագրվում այնտեղ կազմավորվող մարտական խմբերին: Յ.Յ.Դաշնակցութիւնը պիտի ընդառաջ գնար Կարսի ու Խոյ-Սալմաստի շրջաններում համախմբված կազմավորներին: Սասունի պաշտպաններն ակնկալում էին նրա օգնութիւնն ու աջակցութիւնը, և ՅՅԴ պարտավորված էր անհրաժեշտ քայլեր ձեռնարկել ազտագրական պայքարին զինվորագրված հայորդիներին ուղարկել Օսմանյան կայսրութեան դէմ պայքարի դրոշ պարգած մարտիկներին օգնութեան:

3. ՅՅԴ Ընդհանուր ժողովներում ապստամբութեան մասին որոշում կայացնողների համար գաղտնիք լինել չէր կարող, որ միայն Սասունում գտնվող սահմանափակ ուժերը, թեկուզ և գերմարդկային կարողութիւններով օժտված, դարձյալ դատապարտված էին պարտութեան: Յ.Յ.Դաշնակցութեան որդեգրած մարտավարութիւնը մատնանշում է, որ կուսակցութեան ղեկավար մարմինները հույս են ունեցել, որ թուրքական զորքերի ու քուրդ աշիրեթների հետ հայ մարտական խմբերի բախումները, ինչպէս նաև Սասունի երկարատև դիմադրութիւնը կարող էին ավելի մեծ աղմուկ հանել ու արծագանք ունենալ: Այդ դէպքում ավելի մեծ հնարավորութիւն էր ստեղծվում եվրոպական տերութիւնների ուշադրութիւնը բեռնելու Օսմանյան կայսրութիւնում տեղի ունեցող իրադարձութիւնների և Յայկական Յարցի վրա:

Պատմական այդ ժամանակահատվածի ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ Յ.Յ. Դաշնակցութեան ղեկավար մարմինների հետապնդած հիմնական գլխավոր նպատակը հենց դա էր. Սասունի երկարատև դիմադրութեանը և մարտախմբերի մղած կռիւների հարուցած աղմկահարուց գործողութիւններով զրավել եվրոպական գերիզոր տերութիւնների ուշադրութիւնն ու նրանց աջակցութեանը դրական որևէ լուծում տալ Յայկական Յարցին:

¹ Նույն տեղում:

Թեպետ ժամանակաշրջանի ու արմատական նշանակություն ունեցող իրադարձությունների թելադրանքով, ՀՀ-ի հարկադրված փոխում է իր գործունեության ռազմավարությունն ու մարտավարությունը, սակայն ազգային-ազատագրական պայքարում մարտական-հայդուկային և զինատար խմբերի տեղն ու դերը միշտ եղել է առանձնահատուկ: Եթե անաչառորեն գնահատենք, ապա պիտի ընդգծել, որ Երկիր մեկնող մարտական և զինատար խմբերը գլխավորապես համալրել են ազատագրական պայքարին զինվորագրվածներից ամենամվիրյալներն ու խիզախները, որոնց համար հայրենիքի և ազգի ազատության համար մղվող պայքարը եղել է իրենց կյանքի իմաստն ու գերխնդիրը: Հսկայական ճանապարհ կտրելու ու բազում անասելի դժվարություններ հաղթահարելու պատրաստական այդ խմբերին զինվորագրվածները քաջ գիտակցել են, որ իրենք մեկնում են մարտադաշտ, դեպի կենաց-մահու կռիվ, ուր որևէ մեկի չզոհվելը բնավ երաշխավորված չէր:

Պետք է ընդգծել, որ թեպետ Երկիր մեկնող մարտական ու զինատար խմբերն անդամները, առանց բացառության անձնուրաց, քաջավարժ մարտիկներ էին և կռիվների ժամանակ մեծ զոհեր էին խլում թշնամուց, բայց բացառությամբ Թորգոմի գլխավորած «Մորիկ» զինատար հեծելախմբի, ունեցել են եղերական վախճան¹:

Նույն ժամանակահատվածում կազմակերպված «Մոսուն-Զորի արշավանքը», որը իր ուղղվածությամբ ու նպատակով որոշակի ընդհանրություն ունի Խանասորի արշավանքի հետ, նույնպես պիտի բնութագրել որպես «հարձակողական» բնույթի մարտավարություն: Որպես գնահատական մարտական այդ գործողության՝ կարելի է մշել, որ «Մոսուն-Զորի արշավանքը» նույնպես հերոսական էջեր գրեց Հայոց Ազատամարտում, սակայն ազատագրական պայքարին բերած իր նպաստով, ուղղվածությամբ ու հետևանքով բոլորովին անտեղի էր ու չհիմնավորված²:

Ընդհանրացնելով, հարկ է մշել, որ Արևմտյան Հայաստան մեկնող մարտական ու զինատար խմբերի մղած կռիվները թեպետ վեր են որևէ գովասանքից, բայց հանգամանքների բերումով այդ հերոսա-

¹ Մանրամասն՝ Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, էջ 261-368:

² Տե՛ս ՀՀ-ի ԿԱ, թ. 309, գ. 28, 29:

մարտերը նույնպես չնպաստեցին և չէին կարող նպաստել հայ ազատագրական պայքարի արդյունավետ ելքին:

1903 թվականը մեր ժողովրդի կյանքում նշանավորվեց նախադեպը չունեցող իրադարձություններով: Պատմական հիշյալ ժամանակահատվածում, երբ սուլթան Աբդուլ Համիդը Օսմանյան կայսրությունում իրականացնում էր արևմտահայությանը ֆիզիկապես բնաջնջելու քաղաքականություն, ցարական կառավարությունը Հայաստանի արևելյան հատվածում (Արևելյան հայաստան) կյանքի կոչեց հոգևոր ու բարոյական բռնությունների հակահայ ծրագիրը:

1903 թ-ից Հ.Յ. Դաշնակցության մարտավարությունում տեղի են ունենում արմատական տեղաշարժեր, որոնք գլխավորապես պայմանավորված էին Հայկական հարցի և կովկասահայության նկատմամբ ցարական Ռուսաստանի դրսևորած քաղաքականությամբ:

Մինչև 1903 թվականը Դաշնակցության գործունեության ոլորտը սահմանափակված էր գլխավորապես Արևմտյան Հայաստանով: ՀՀԴ ձևավորվել էր արևմտահայ խնդրի շուրջը և կուսակցության ծրագրում տեղ գտած հիմնադրույթներն ու համաժողովների ընդունած որոշումները հիմնականում վերաբերում էին թուրքական լծից Արևմտյան Հայաստանի ազատագրմանը¹:

Այդ թվականից սկսած՝ Հ.Յ. Դաշնակցությունը իր գործունեությունում բացում է պայքարի երկրորդ՝ Կովկասյան ճակատը:

Եթե սահմանենք Կովկասյան ճակատի բուն էությունն ու ուղղվածությունը, ապա ամփոփ պիտի ասել, որ կայսր Նիկոլայ 2-րդի կողմից հաստատված հայ եկեղեցու կալվածքների ու ունեցվածքի բռնագրավման մասին 1903 թ. հունիսի 12-ի հանրահայտ օրենքի հրապարակումից հետո Հ. Յ. Դաշնակցությունը որդեգրում է ցարական Ռուսաստանի դեմ պայքարի ռազմավարությունը և պարզում հեղափոխական պայքարի դրոշմ ընդդեմ հզոր կայսրության:

Հ. Յ. Դաշնակցության նախաձեռնությամբ ստեղծվում է համաժողովրդական շարժումը կազմակերպող ու ղեկավարող «Հայկական ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե», որի գործուն մասնակցությամբ բողոքի ցույցեր, գործադուլներ կազմակերպվեցին Երևանում, Թիֆլիսում, Կարսում, Բաքվում և Հարավային Կովկասի մի շարք քաղաքներում ու բնակավայրերում:

Կովկասահայության միասնական և անգիջում պայքարը ունեցավ իր դրական արդյունքը: 1905թ. օգոստոսի 1-ին ցար Նիկոլայ 2-րդի

հրամանով չեղյալ հայտարարվեց հունիսի 12-ի օրենքը, և հայ եկեղեցուն վերադարձվեցին նրանից բռնագրավված կալվածքներն ու վերաբացվեցին հայ-ժխական դպրոցները:

1905 թվականը հայ ժողովրդի կյանքում նշանավորվեց նախադեպը չունեցող այնպիսի իրադարձություններով, որոնք անակնկալ էին ոչ միայն բովանդակ հայության, այլև ազգային-ազատագրական պայքարն առաջնորդող ազգային-հեղափոխական կուսակցությունների համար: 1905թ. փետրվարին Անդրկովկասում բռնկվում են հայ-թուրքական ազգամիջյան ընդհարումներն, ու այս անգամ արդեն արևելահայության վրա է ծառանում ջարդերի սպառնալիքը: Ցարական իշխանությունների հովանավորությունից գոտեպնդված՝ մահմեդական զինյալ հրոսակախմբերը հայկական կոտորածներ են սանձազերծում Անդրկովկասում պանիսլամիզմի կենտրոն Բաքվում: Կոտորածներն արագորեն տարածվում են Երևանի նահանգ, Ձանգեզուր, Արցախ, Կովկասի հայաբնակ բոլոր շրջաններն ու ընդհուպ մինչև Թիֆլիս: Հայ ազգային կուսակցությունները և մասնավորապես ՀՅԴ մինչ Կովկասում ծնունդ առած ազգամիջյան բախումները՝ գլխավոր ուշադրությունը կենտրոնացնելով արևմտահայության ազատագրության պայքարի խնդիրների վրա և ընդհարումների առաջին օրերին հայտնվելով աննպաստ իրավիճակում ու անակնկալի գալով, չեն կարողանում ինչպես հարկն է արժանի հակահարված տալ հայկական բնակավայրերը ասպատակող թուրք ամբոխի վայրագություններին:

Կովկասահայության փրկության միակ միջոցը կազմակերպված ինքնապաշտպանությունն էր: Բնական է, որ Դաշնակցությունը իր գործունեությունում դարձյալ պիտի առաջնորդվեր ինքնապաշտպանության կազմակերպման մարտավարությամբ:

Կովկասահայության ինքնապաշտպանություն կազմակերպելու և ղեկավարելու նպատակով Հ.Յ.Դ. Բյուրոյի որոշմամբ ստեղծվում է Ձինվորական մարմին, որը կռիվների ծավալման պարագայում օժտվելու էր առավելագույն ինքնուրույնությամբ ու պատասխանատվությամբ:

Սթափ գնահատելով Անդրկովկասում կովկասահայության համար ստեղծված ծանրագույն իրավիճակը՝ Ձինվորական մարմինը վտանգված շրջաններն է ուղարկում նախորդ տարիներին անբասիր վարքով ու հերոսականությամբ աչքի ընկած բազմաթիվ գործիչների և առաջին հերթին

արդեն բազում կռիվների մասնակցած ու մարտական մեծ փորձառություն ունեցող ֆիդայիների, որոնց առաջնորդությամբ ստեղծվում են ինքնապաշտպանական մարտական խմբեր:

1905-1906 թթ. հայության գոյապայքարում անգնահատելի են քաջակորով հայորդիներ Նիկոլ Դումանի, Սեբաստացի Մուրադի, Խանասորի Վարդանի, Քեռու, Սեպուհի, Սևքարեցի Սաքոյի, Համազասպի, Սմբատի, Հաճի Հակոբի և բազում այլ հերոսների անգնահատելի ծառայությունները: Կարելի է ասել, որ 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումներում հայության ինքնապաշտպանությունը համաժողովրդական պատերազմ էր, ազգային-ազատագրական պայքարի անքակտելի բաղկացուցիչ մասը, որին կովկասահայության հետ մեկտեղ իր մասնակցությունը ունեցավ նաև արևմտահայությունը: Այն շարժումը, որ հայ ժողովուրդը ծավալել էր ընդդեմ ցարիզմի, սկսած հայոց դպրոցների փակումից և 1903 թ.-ից, ավարտվեց 1905-1906 թթ. ազատագրական պայքարի հաղթանակով:

Սասունի ապստամբության պարտությունից հետո, համաձայն Աղթամար կղզում տեղի ունեցած խորհրդաժողովի որոշման, Գևորգ Չավուշն ու Կորյունը զինակիցներով վերադառնում են Սասուն:

Կարելի⁶ է Գևորգի ու նրա գլխավորած 17 ֆիդայիների վերադարձը ընդունել որպես Հ.Յ.Դաշնակցության որոշում, որը սկզբնավորելու էր պայքարի նոր մարտավարություն:

ՀՀԴ 2-րդ Ընդհանուր ժողովի կողմից ընդունած «...ուժերու կեդրոնացումը երկրին մեջ, ցոյցը Պոլիս և ծովեզերեայ քաղաքները, և մերժելով ֆեոտայական ասպատական գործունեութիւնը...» որոշումը, որը հաստատվել էր նաև հաջորդ 3-րդ Ընդհանուր ժողովի կողմից դեռևս մնում էր անփոփոխ: Իսկ դա նշանակում է, որ ընդհանուր ապստամբության կազմակերպման հարցում ՀՀԴ մարտավարությունը մնում էր նույնը:

Ազատագրական պայքարի փորձը մատնանշում էր, որ հայդուկային-պարտիզանական կռիվների մարտավարությունը չէր կարող հուսալի և արդյունավետ միջոց լինել ընդհանուր ապստամբության կազմակերպման գործում: Իսկ որևէ կասկած չիմել չէր կարող, որ Գևորգ Չավուշի վերադարձը հավասարազոր էր հայդուկային-պարտիզանական կռիվների վերսկսմանը:

Հարց է ծագում. եթե Գևորգ Չավուշը պիտի մարտական-հայդուկային գործողություններ ձեռնարկեր, ապա որքանով էր նպատակահարմար նրա ներկայությունը Տարոնում ու Սասունում, որ այդ ժամանակ - հեղեղված էին թուրք զինվորներով ու ոստիկաններով:

Հայ ազգային-ազատագրական պայքարը ընթանում էր չափազանց դժվարին ու բարդ պայմաններում: Օսմանյան կայսրության և ցարական Ռուսաստանի քաղաքական կյանքում կատարվող տեղաշարժերի, ինչպես նաև Հայկական հարցի նկատմամբ եվրոպական տերությունների դրսևորած վերաբերմունքի թելադրանքով ՀՀԴ հարկադրված որդեգրում և փորձում էր կենսագործել ոչ միաբժեք, տարաբնույթ մարտավարություն: Երբեմն նույնիսկ Ընդհանուր ժողովի որոշումները կարող էին յուրովի կենսագործվել ՀՀԴ Դաշնակցության ապակենտրոն կառույցների կողմից: Օրինակ, թեպետ արդեն կար հայդուկային-մասնակի գործողությունները դադարեցնելու և ուժերի կենտրոնացման մասին 2-րդ, 3-րդ Ընդհանուր ժողովների որոշումը, բայց Քևորգ Չավուշի Սասուն վերադառնալուց հետո Դուրան-Բարձրավանդակում տիրող իրավիճակի թելադրանքով հայդուկային կռիվները դարձյալ վերսկսվում են և շարունակվում մինչև 1908թ. օսմանյան սահմանդրության ընդունումը

Քևորգը հանրահայտ դեմք էր՝ թուրք իշխանությունները վաղ թե ուշ կբացահայտեին նրա ներկայությունը և անկասկած համապատասխան քայլեր կձեռնարկեին նրան որոնելու ու ձերբակալելու: Նկատի ունենալով վերոհիշյալ հանգամանքները՝ դժվար է ընդունել, որ ՀՀԴ խորհուրդը և Բյուրոն կհամաձայնեին թույլատրել Քևորգի վերադարձը, որը միանշանակ հավասարագոր է հրաժարվել 2-րդ և 3-րդ Ընդհանուր ժողովներում ընդունած որոշումից և շարունակել նախկին մասնակի հայդուկային-պարտիզանական բնույթի կռիվներ մղելու մարտավարությունը:

Որևէ սկզբնաղբյուր չի հաստատում, ու Քևորգ Չավուշի գործունեությունը պայմանավորված է ՀՀԴ Դուրան-Բարձրավանդակի կենտր. կոմիտեի դիրքորոշմամբ ու համաձայնությամբ: Վերադառնալով Սասուն՝ Քևորգը ծրագրում է կենսագործել պայքարի նոր մարտավարություն:

Դաշտի գյուղերում հայտնվել էին քրդական ցեղախմբեր, ինքնակոչ աղաներ ու բեկեր, որոնք թուրք ոստիկանների օգնությամբ լիիրավ տիրոջ իրավունքով բռնագրավում էին հայի սեփականությունը, մտրակի ու սվինների հարվածների սպառնալիքով գյուղացիների ձեռքերով հայոց գյուղերում կառուցում էին տներ: Հայերի կողմից փոքրիկ ընդլզումն անգամ ուղեկցվում էր դաժան խոշտանգումներով ու բանտարկություններով:

«Հայ գիւղերը, - նշում էր «Դրօշակ»-ը,- կամաց-կամաց կը դատարկւին հայերէ ու ասոնց տեղը իսլամներ կը բռնեն... Մշոյ դաշտին մէջ շատ գիւղեր ենթարկւած են թալանի ու կոտորածի: Քիւրդեր և թիւրքեր մտեր են Դաշտ, դուրս մղեր հայերը եւ տէր դարձեր անոնց

հողերուն ու կալածներուն: Դաշտի բնիկ մեծագոյն մասը փախեր, գաղթեր է...»¹:

Ինչպի՞սի մարտավարություն պիտի որդեգրեր Գևորգ Չավուշն ու ՅՅԴ կառույցները պայքարելու ընդդէմ թուրք իշխանությունների գործադրած քաղաքականությանը, հայկական գյուղերը զավթող քուրդ ցեղախմբերին:

Գևորգը վճռում է դիմել համարձակ գործողությունների՝ սպառնալիքով ու սպանություններով սանձահարել ժողովրդին հարստահարողներին և թույլ չտալ քուրդ ցեղախմբերին անարգել տարածվել հայկական բնակավայրերում ու զավթել հայ գյուղացիների հողերը:

Յամախմբելով ֆիդայիների փոքրիկ խմբերը՝ Գևորգը շարունակում է քուրդ բեկերին ու աղաներին անսպասելիորեն «հյուրընկալվելու» համարձակ ձեռնարկումները: Ամենուր նրա այցելությունները տևում էին հաշված րոպեներ, որի ընթացքում «հյուրընկալողին» թվարկում էր նրա չարագործությունները, ապա արձակում դատավճիռը և արագորեն անհետանում: Իսկ Գևորգի արձակած դատավճիռները երբեք անիրագործելի չէին մնում:

Կարելի է նշել, որ Գևորգ Չավուշի կենսագործած գործողություններով, զուտ մարտավարական առումով մի նոր էջ գրեց հայ ազատագրական պայքարում:

Ֆիդայիների հանդուգն գործողություններից ահաբեկված՝ քրդերի մեծ մասը հեռանում է Դաշտի շրջաններից, իսկ նրանց կառուցած ամանձնատները հիմնահատակ կործանվում ու մոխրի են վերածվում:

Կ. Սասունու գնահատմամբ քուրդ ցեղապետերից շատերը, որոնք նախկինում թշնամաբար էին տրամադրված հայերի նկատմամբ, սկսում են հաճոյանալ ու փնտրել նրա բարեկամությունը²:

Մարտական խմբի գլուխն անցած՝ Գևորգը սպառնալիքի միջոցներով կարողացավ Տարոնի ու Սասունի շրջաններում խոչընդոտել թուրք կառավարության հակահայ ծրագրերը:

Թուրք իշխանությունները չէին կարող իրենց քաղաքականության իրականացմանը խոչընդոտող ֆիդայիների հանդուգն գործողությունների ականատեսը լինել: Իրենց գործակալներից տեղեկանալով Գևորգի մարտախմբի գործունեության մասին՝ կառավարությունը զինվորական ու ոստիկանական ջոկատներով հետապնդելով՝ ձգտում էր վերացնել ֆիդայիներին: Գևորգը մեծ դժվարությամբ կարողանում էր խուսափել բախումներից, սակայն հնարավոր չէր շարունակ ազատվել ամենուրեք հայտնվող թուրքական ջոկատների հետապնդումներից: Նրա հերոսական կռիվները

¹ «Դրօշակ», 1904, թիւ 6, էջ 73:

² Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 695:

շարունակվում են մինչև նրա մղած վերջին՝ Ղարսի, Արվառինջի, Սուլուխի կռիվները:

Գևորգ Չավուշի հայդուկապետության շրջանն իր առանձնահատկությամբ, կենսագործած աննախադեպ մարտավարությամբ Հայոց Ազատամարտի առավել ուշագրավ, հերոսական կռիվներով ու պայքարի դրամատիզմով հագեցած էջերից է: Կարելի է ասել, որ նրա, ապա նաև Սպաղանաց Մակարի նահատակությամբ վերջակետ դրվեց ոչ միայն հայդուկային-պարտիզանական կռիվներին, այլև որևէ կարգի մարտական ձեռնարկներին, թեպետ Արևմտահայաստանի մի շարք շրջաններում, գլխավորապես Տարոնում և Վասպուրականում մինչև 1908թ. հուլիսյան սահմանադրության հռչակումը դեռևս շարունակում էին գործել խիստ սահմանափակ թվակազմ ունեցող փոքրաթիվ ֆիդայական խմբեր:

ՀՀԳ գործունեության մեջ, 1904 թ-ը սկզբնավորում է վերակառուցման ու վերելքի նոր շրջան: Ազատագրական պայքարում հայ ազգային կուսակցությունների, մասնավորապես ՀՀԳ գործունեությանը բնորոշ է տեղատվության ու նահանջի, ապա նաև վերելքի հաջորդականությունը, որը հիմնականում պայմանավորված էր պատմական նշանակություն ունեցող իրադարձությունների յուրահատկությամբ ու փոփոխությամբ և տարածաշրջաններում գործող կուսակցական գործիչների անհատականությամբ: Այս օրինակափությունը դրսևորվել է նաև ՀՀԳ Վանի կենտր. կոմիտեության գործունեությունում:

1896 թ. Վանի հունիսյան ողբերգական դեպքերի հետևանքով մեծ կուրուստներ ունեցան ոչ միայն Արմենական և Հնչակյան կուսակցությունները, այլև Դաշնակցությունը:

ՀՀԳ բյուրոյի հանձնարարությամբ 1903թ. նոյեմբերին Վան են գալիս ՀՀԳ 3-րդ Ընդհանուր ժողովի կողմից Վանի նահանգում աշխատելու համար հինգ ընտրված գործիչներից միայն երկուսը՝ Վահան Փափազյանը (Կոմս) ու Իշխանը:

1. ՀՀԳ Վանի կենտրոնական կոմիտեն գործել է հետևյալ մարտավարությամբ.
2. Վերականգնել կուսակցական կառույցներն ու ընդլայնել նրանց գործունեության շրջանակները:
3. Հնարավորինս լուծել մարտական խմբերի ու ժողովրդի զինման խնդիրները:

ՀՅԴ «Շամ» կենտր. կոմիտեի գործունեության ուսումնասիրությունը աներկբա մատնանշում է, որ Իշխանը ի սկզբանե ցանկություն չի ունեցել մնալու Վանում և աշխատելու կենտր. կոմիտեի վերոհիշյալ անդամների ընկերակցությամբ: Նրա համար շատ ավելի գերադասելի էր գործունեության առավել ազատ, ինքնուրույն բնագավառը և Վանում հաստատվելու հենց առաջին իսկ օրից բացահայտորեն հայտարարել է, որ չի ցանկանում գործել քաղաքում ու դաշտային շրջաններում:

Իշխանը ՀՅԴ Շամի կենտր. կոմիտեից պահանջում է իրեն վստահել գործելու լեռնային շրջաններում: «Կեդր. կոմիտեն, գրում է Կոմսը, -Շատախեն բերել տուլա հին մեր զինուորներեն քամի մը հոգի, որոնց հետ Իշխանը զինուած պզտիկ խումբերով մը Շատախ գնաց»¹:

Վանի նահանգի այն շրջանը, որը ստացել է «Լեռնապար» անունը, իր տարածքում ընդգրկում էր Մոկսի, Գավաշի (Ռշտունիք), Շատախի, Վերին և Ներքին Հայոց Ձորի, Շիտանի, Սպարկերտի, Կառկառի, Մամրտանքի և Խիզանի գավառները: Իշխանի գլխավորությամբ հիմնվում է ՀՅԴ «Լեռնապար» կենտր. կոմիտեն, որի կազմում էին վերոհիշյալ շրջանների և Ոզն գյուղի ՀՅԴ կառույցները²:

ՀՅԴ Արևելյան բյուրոյի որոշմամբ 1905 թ. փետրվարին Վանում հաստատվում է Արամ Մանուկյանը, իսկ մեկ ամիս անց՝ մարտին, Ռուբեն Տեր-Մինասյանը:

Ձեռքերի տեղափոխության համար ՀՅԴ Վանի կենտրոնական կոմիտեն գործել է նոր մարտավարությամբ, որը ստանում է «ծծման» եղանակ անվանումը: «Ծծման» եղանակով իրականացրած զենք ու զինամթերքի տեղափոխությունը կատարվել է հիմնականում քուրդ վալադների ու հայ շալակավորների միջոցով:

Համաձայն Վ. Փափազյանի հավաստման, որ փոխադրությունը կատարվել է տարվա բոլոր եղանակներին, ցերեկը սայլերով՝ «վառելիք, ցախ, փթիր, ցորեն եւ այլն սննդեղէններ փոխադրող, կամ էշերով, միշտ քօղարկուած, իսկ, գլխաւորապէս, զիշերները, զիւղէ-զիւղ...»³:

ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովը կրկին հաստատում է, որ Արևմտյան Հայաստանում Դաշնակցության գուրծունեության գլխավոր վայրերը, հետևաբար կուսակցության ուժերի կենտրոնավայրերն են Վասպուրականը և Դուրան-Բարձրավանդակը, ընդսմին կենտր. կոմիտեություններ

¹ Փափազեան Վ., նշվ., աշխ., հ.1, էջ 164:

² Տե՛ս ՀՅԴ ԿԱ, թծ. 663, գ. 30:

³ Փափազեան Վ., նշվ., աշխ., էջ 210:

րից Շամին հատկացվում էր ամենամեծ գումարը՝ 172.000 ֆրանկ, ապա Ջիֆոնին (Ջինական ֆոնդ)՝ 105.000 և Դուրան- Բարձրավանդակին՝ 83.000¹:

Վասպուրականը Արևմտյան Հայաստանում դարձնելով իր գուրծու- նեության գլխավոր կենտրոնավայրը՝ Դաշնակցությունը հետևաբար ավե- լի մեծ ուշադրություն պիտի դարձներ Շամի ու Լեռնապարի շրջանների կուսակցական կառույցները ուժեղացնելու, նահանգի հայ բնակչությանը առավելագույնս կազմակերպելու ու զինելու վրա:

Թուրք իշխանությունները գուցեև ոչ ամբողջովին, բայց անկասկած ինչ-որ չափով տեղյակ էին Վանի նահանգում հայ ազգային-քաղաքա- կան կուսակցությունների, մասնավորապես Դաշնակցության ծավալած գործունեությանը: Վան քաղաքում և գավառներում խստագույն վերահսկողություն սահմանելու նպատակով թուրք իշխանությունները էրզրումից ու Տիգրանակերտից զինվորական ուժեր են բերում և տեղաբաշխում Վանի նահանգում:

ՀՀԴ Վանի Կենտր. կոմիտեի հանձնարարությամբ կազմվում է զինվո- րական խորհուրդ, որը անհրաժեշտության դեպքում պիտի կազմակեր- պեր ու ղեկավարեր քաղաքի ինքնապաշտպանությունը: Գավառների ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար այնտեղ են մեկնում զինվորական ղեկավարներ, հաստատվում են արագ գործող հաղորդակ- ցության ուղիներ:

Զինվորական խորհրդի որոշմամբ կռիվներ սկսվելու դեպքում քաղա- քում զինվորական գործողությունները պիտի ղեկավարեր Իշխանը: Բայց ըստ Կոմսի՝ «...անոր սիրտը տաք չէր քաղաքին վրայ... Իշխանը իր խումբով շուտով անցաւ լեռնային շրջանը կազմակերպելու այնտեղի գաւառներու ինքնապաշտպանութիւնը»²:

Բարեբախտաբար բացի Վարագա լեռներում խմբապետ Հարություն- նի գլխավորած մարտախմբի մղած կռվից, Վանի նահանգում զինված այլ բախումներ տեղի չեն ունեցել: Փոխարենը նահանգի ոստիկանա- կան ուժերը սկսում են ձերբակալությունները: 1907թ. մայիսին ձերբա- կալվում են ՀՀԴ «Շամ» կենտր. կոմիտեի անդամներ Դևոնդ Մելոյանն ու Արմենակ Շալճյանը: Բայց ամենասարսափելին տեղի է ունենում 1908թ. հունվարի 23-ին (փետրվարի 5): Այդ օրը ՀՀԴ անդամ Դիերցի Դավոն թուրք իշխանություններին է հայտնում Դաշնակցության զենք ու զինամթերքի պահեստների տեղն ու մի շարք այլ գաղտնիքներ³:

¹ Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Գ, էջ 332:

² Փափագեան Վ., մշվ., աշխ., հ. 1, էջ 504:

³ Տե՛ս «Դրօշակ», 1908, թիւ 3, էջ 34:

Չհնապահեստների բռնագրավմանը զուգընթաց թուրք իշխանությունները զորքով ու ոստիկանական ուժերով շրջափակում են քաղաքը և ավելի ուժեղացնելով խուզարկությունները՝ ձերբակալում ու բանտերն են լցնում հարյուրավոր վանեցիների:

Վ. Փափազյանի հավաստմամբ՝ «Մենք աննպատակ գտանք զինական ելոյթներ ունենալ եւ կորստաբեր ժողովրդին համար կռուի կանգնել 5000-է աւելի թուրք բանակին հետ...Որոշեցինք պարպել քաղաքը աչքի զարնող աւելորդ ուժերէ: Հաւաքել տուփնք դեռ չմատնուած պահեստներու տէրերը եւ միացնելով տասնեակ մը մեր կարելոր մարտիկներուն՝ դրկեցինք լեռնային գաւառները»¹:

Թեպետ «Շան» կենտր. կոմիտեի ձեռնարկած քայլերի շնորհիվ հաջողվում է զենք ու զինամթերքի մի մասը տեղափոխել ուրիշ թաքստոցներ, այնուամենայնիվ, մատուռայն հետևանքով թուրք իշխանությունները կարողանում են հայտնաբերել ու բռնագրավել զինապահեստներում գտնվող զենք ու զինամթերքի մեծ մասը: Ձեռքերի զգալի մասը փախցնում են բռնագրավման գործողությունների մասնակիցները:

Պահպանվել է Տարոն-Վասպուրական Պատասխանատու կենտր. կոմիտեի անդամ Վ. Փափազյանի ստորագրությամբ վավերացված տեղեկագիրը, որտեղ արձանագրված է հունվարի 23-24-ին և մինչև հուլիսի 15-ը բռնագրավված զենքերի, փամփուշտների ու այլ առարկաների քանակը:

Համաձայն տեղեկագրի՝ զենք ու զինամթերքի ընդհանուր կորուստները(1908թ. հունվարի 23-ից մինչև հուլիսի 15) կազմում են 548 հրացան և 425661 փամփուշտ²:

Տեղեկագրում արձանագրված փաստերը վկայում են, որ ՀՀԴ զինապահեստներից զենքի բռնագրավման դեպքեր կատարվել են նաև 1907թ-ին: Ընդհանուր ժողովին հասցեագրված «Կորուստներ 1907-ի Վարազի լեռան և Արհեստանոցի» խորագիրը կրող տեղեկագրում նշվում է, որ 1907թ. բռնագրավվել է 17 հրացան(3 մոսին, 13 բերդան, 1 վենչեստեր), 2026 փամփուշտ(մոսինի՝ 1100, բերդանի՝ 926), 6 ատրճանակ ու 522 փամփուշտ: Բացի դրանից, բռնագրավվել են ռումբեր, հրացանի մեծաքանակ մասեր, 11 դիտակ և բազմաթիվ գործիքներ³:

Այս տեղեկագրում նշված փաստերի իսկությունը որևէ կասկած չի կարող հարուցել: Եթե հիմք ընդունենք Վ. Փափազյանի ստորագրությամբ վավերացված փաստաթղթում տեղ գտած տվյալները, ապա պիտի ա-

¹ Փափազեան Վ., նշվ., աշխ., հ.1, էջ 518:

² ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ237, էջ 2:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 1:

սել, որ այս հարցում, իրոք, «Շամ» կենտր. կոմիտեն ունի մեղքի իր մեծ բաժինը:

1. Նախ, խստագույնս չի պահպանվել զինապահեստների գաղտնիությունը:

2. Վասպուրական բերած զենք ու զինամթերքի մեծ մասը չպետք է պահեստավորվեր Վանի զինապահեստներում: Արևմտյան Հայաստանում ՀՅԴ գործունեության մյուս կենտրոնավայրը, բացի Վասպուրականից, եղել և մնում էր Դուրան-Բարձրավանդակը: Շամի ընկերները շատ հաճախ խախտել են սահմանված կարգը և իրենց զինապահեստներում ամբարել նաև այն զենքերն ու զինամթերքը, որոնք նախատեսված էին Դուրան-Բարձրավանդակի համար: 1909թ. մայիսին տեղի ունեցած ՀՅԴ «Դուրան-Բարձրավանդակ»-ի Ռայոնական (շրջանային) ժողովի օրակարգում ընդգրկված 1-ին՝ «Ռազմամթերքի հաշուետուութեան հարցը եւ Վանի ցաւոտ խնդիրը» հարցը վերաբերում է Դուրան-Բարձրավանդակի համար Կովկասից ուղարկված այն զենքերին, որոնք մնացել էին Վանի զինապահեստներում և Դավոյի մատնության հետևանքով բռնագրավվել թուրք իշխանությունների կողմից¹:

Վանի զինապահեստների բռնագրավումը մեծ կորուստ էր ոչ միայն ՀՅԴ Վասպուրականի կառույցների, այլև հայ ազատագրական պայքարի համար: Իզուր չէ, որ այս կապակցությամբ իրենց դժգոհությունն են հայտնել ազատագրական պայքարի նշանավոր գործիչներից շատերը:

Վասպուրականին մեծ քանակությամբ դրամ, զենք ու զինամթերք հանձնելու կապակցությամբ Անդրանիկին ու Մուրադին գրած նամակում իր դժգոհությունն էր հայտնել նաև Գևորգ Չավուշը՝ նշելով՝ «Բարձրավանդակ ու Տարօն, որ ամենէն աշխատող ու գործ տեսնող եւ շատ մը զոհեր տուող շրջանն է, նրա տրամադրութեան ներքոյ ոչ մի դրամ չկայ, իսկ Շամի (Վասպուրական) տրամադրութեան ներքոյ կա 80000 ոսկի, նաեւ կայ 100000 աւելի ծայրեր (նկատի ունի փանփուշտներ-Հ.Գ.), իսկ մերը՝ ոչ չինչ»²:

Հունվարյան դեպքերից հետո թուրք իշխանությունները, ինչպես արդեն նշվել է, ձերբակալում են կուսակցական բազմաթիվ գործիչների, իսկ մայիսի 6-ին նաև Արամ Մանուկյանին ու նրա հետ միասին ևս 14 ընկերների: Վանում տիրում են անկումային, վախի տրամադրություն և խառնաշփոթ ու անկառավարելի իրավիճակ:

Իրոք, չափազանց թանկ հատուցեց հայ ազատագրական պայքարը Դավոյի դավաճանության պատճառով, և միանգամայն տեղին ու ճշմարիտ է Սեբաստացի Մուրադի գնահատականը. «Տարիներու չարաչար աշ-

¹ Տե՛ս Տարօնի Արժիւ, Հալեպ, 1949, թիւ 28, էջ 45:

² ՀՅԴ ԿԱ, թժ. 714, գ. 6:

խատանքով, մեր ընկերներու կյանքի գնով ամբարուած ահագին զինամթերքը կարճ ժամանակի մէջ քանուն տուին»¹:

1908թ. հուլիսին տապալվում է Սուլթան Յամիդի բռնապետությունը, և Օսմանյան կայսրությունը հռչակվում է սահմանադրական միապետություն: Բանտերից ազատվում են Արամ Մանուկյանն ու բռնադատված հեղափոխական բազմաթիվ գործիչներ:

Հուլիսյան սահմանադրության հռչակմամբ Հ. Յ. Դաշնակցության գործունեությունում սկսվում է նոր շրջան:

Օսմանյան կայսրությունում 1908 թ, տեղի ունեցած երիտթուրքեր հեղաշրջումից հետո, արմատապես փոխվում է Դաշնակցության մարտավարությունը: Հանրահայտ իրողություն է, որ մինչ միապետության տապալումը ՀՅԴ համագործակցել ու աջակցել է երիտթուրք կուսակցությանը: 1908 թ.սահմանադրության հռչակումից հետո հրաժարվելով ազատագրական պայքարը կազմակերպելու իր նախկին մարտավարությունից, դադարեցնում է Երկիր գեներ ու զինամթերք առաքելու մարտական խմբեր կազմակերպելու գործը Դաշնակցությունը իր կարողություններն է տրամադրում Օսմանյան պետականության վերաշինության գործին: Սակայն, շուտով պարզվեց, երտթուրքերի ղեկավարած սահմանադրական պետությունը հայության նկատմամբ դրսևորած վերաբերմունքով բնավ չէր զիջում նախկին վարչակազմին:

Առաջին աշխարհամարտի նախօրեին որոշակիորեն փոխվում է գերիզոր տերությունների դիրքորոշումը Թուրքիայի և Հայկական հարցի նկատմամբ: Դաշնակցությունը դարձյալ որդեգրում է երրորդ ուժին, այն է՝ գերիզոր տերություններին ապավինելու մարտավարությունը և 1912 թ. խզում է կապերը երիտթուրքերի հետ:

1912 թ. բռնկված թուրք-բալկանյան պատերազմը և Թուրքիայի նկատմամբ գերիզոր տերությունների դիրքորոշումների փոփոխությունը հայ ազգային-քաղաքական կուսակցությունների շրջանում որոշակի հույսեր է արթնացնում Հայկական Հարցի լուծման կապակցությամբ: Այդ նպատակով, նույն տարում ռուսական կայսրության հայաշատ բնակավայրերի ներկայացուցիչների մասնակցությամբ գումարվում է խորհրդատուական-համագումար: Խորհրդատուական-իրողական որոշմամբ ստեղծվում է Հայոց Ազգային Բյուրո, որը թեպետ կազմված էր բազմակուսակցական հիմունքներով, սակայն տիրապետող ուժը Հ. Յ. դաշնակցությունն էր:

1914 թ. բռնկվում է առաջին աշխարհամարտը և հայությանն ու նրա ազատագրական պայքարի ղեկն ստանձնած կազմակերպություններին, ի-

¹ Վարանդեան Մ., Սուրատ, էջ 127:

հարկե նաև Ազգային Բյուրոյին, սպասում էին նոր փորձություններ: Ինչպիսի՞նք մարտավարություն էր որդեգրելու Դաշնակցությունը:

Հայկական կամավորական շարժման, զորախմբերի կազմավորման և ընդդեմ Օսմանյան կայսրության նրանց մասնակցության ու դրանում Դաշնակցության դերակատարության վերաբերյալ հայ պատմագիտության մեջ եղել են և մինչ օրս զարգացվում են ոչ միանշանակ, երբեմն իրարամերժ տեսակետներ:

Ո՞վ էր կամավորական շարժման և կամավորական զորախմբերի կազմավորման նախաձեռնողն ու ղեկավար ուժը: Քանի որ հայ ազգային-ազատագրական պայքան առաջնորդող ազգային-քաղաքական կուսակցություններից ամենահզորն ու հեղինակավորը Հ. Յ. Դաշնակցությունն էր, հետևաբար նա պիտի լիներ կամավորական շարժման նախաձեռնողը, և նա պիտի ստանձներ զորախմբերի կազմակերպչի ու առաջնորդի դերը: Սակայն պատմական տվյալ ժամանակահատվածի և կամավորական շարժման մանրամասների ուսումնասիրությունը մատնանշում է, որ նման տեսակետը այնքան էլ լիարժեք ու հիմնավորված չէ:

Առաջին աշխարհամարտի բռնկման նախօրեին Հ.Յ. Դաշնակցությունը երզրումում կայացած ՀՅԴ Ընդհանուր ժողովում ընդունում է ժամանակաշրջանի յուրահատկություններին ու պահանջներին համահունչ, կարելի է ասել իրատեսական մարտավարություն, որով կուսակցությունը պիտի առաջնորդվեր Ռուսաստանի դեմ Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելու պարագայում:

Համաձայն ՀՅԴ Ընդհանուր ժողովի որդեգրած մարտավարության՝ հայ բնակչությունը պատերազմի բռնկման դեպքում պիտի կատարեր իր քաղաքացիական պարտականությունը և պահապաներ չեզոքություն: Դաշնակցությունը նույնպես պիտի պահպաներ չեզոքությունն ու չպետք է նախաձռներ կամավորական զորախմբերի կազմավորումը ոչ հոգուտ Ռուսաստանի և ոչ էլ Թուրքիայի: Սակայն երբ բռնկվեց պատերազմը, և Կովկասյան ռազմաճակատում բախվեցին ռուսական ու թուրքական բանակները, Դաշնակցությունը, անտեսելով Ց-րդ Ընդհանուր ժողովում չեզոքության մասին ընդունած որոշումը, կազմակերպեց ու ղեկավարեց կամավորական շարժումը:

Անդրադառնալով կամավորական շարժման ծավալման պատճառներին Հայոց Ազգային Բյուրոյի կամավորական զորախմբերի շտաբի պետ Նիկոլ Աղբալյանը 1917 թ. սեպտեմբեր- հոկտեմբեր ամիսներին Թիֆլիսում կայացած Հայոց Ազգային համախորհրդակցությունում ասել է. « Կամավորական շարժման մասին դատավճիռը կ'արձակի ապագա հայ պատմագիրը: Իսկ մենք, որպես ականատեսներ, կարող ենք մտքեր բանացնել այդ շարժման մասին և ցույց տալ մեր վերաբերմունքը: Երբ ակնհայտ դարձավ, որ Թուրքիան էլ, որպես հակառակորդ մեր դաշնակիցներին, կռվի է դուրս գալիս, այդ ժամանակ ինքնաբերաբար շարժում սկսվեց հայկական բոլոր խավերում:

Կամավորներ երեւացին անգլիական եւ ֆրանսիական բանակներում: Կամավորական հոսանք սկսվեց նաեւ դեպի ռուսական բանակը: Այդ ցրիվ, անկազմակերպ շարժանը որոշ ձեւ եւ ուղղություն տալու համար ծնվեց համապատասխան ազգային մարմին (նկատի ունի Հայոց Ազգային Բյուրոյի կազմում ստեղծված կամավորական խմբերի շտաբը(Կարգադրիչ մարմին), որի պետը ինքն էր - Յ.Գ.), որ իր ձեռքն առավ հայ կամավորական շարժման ղեկավարությունը»¹:

Ծիշտ է, Դաշնակցությունը, այնուամենայնիվ, զործուն և ղեկավար մասնակցություն է ունեցել կամավորական զորախմբերի կազմավորմանը, բայց անժխտելի է, որ կամավորական շարժումը նախաձեռնել ու ուղղություն է տվել ցարական իշխանությունը և նրա թելադրանքով՝ Հայոց Ազգային Բյուրոն, որի պատվավոր նախագահն էր Վրաստանի հայության հոգևոր թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը, նախագահը ժողովրդական կուսակցության անդամ Սամսոն Հարությունյանը, իսկ տեղակալը՝ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսյանը:

Կամավորական զորախմբեր կազմավորելու համար Ազգային Բյուրոյին կից ստեղծվում է Կարգադրիչ Մարմին, որի անդամներն էին Ն. Աղբալյանը, Ս. Վրացյանը, Յ. Զավրիյանը, Արմեն Գարոն, Աբ. Գյուլխանդանյանը, Յ. Արղությանը, և Ռոստոմը²:

Ուշագրավ է, որ հայ կամավորական զորախմբերի կազմավորման ժամանակ ֆինանսական ծախսերը հոգացել է ոչ թե Կովկասյան ռազմաճա-

¹ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1992, թիւ 12, էջ 79:

² Տե՛ս Վրացեան Ա., Կեանքի ուղիներով, հ. Գ, էջ 31:

կատի ռուսական բանակի հրամանատարությունը, այլ՝ գլխավորապես Չայոց Ազգային Բյուրոն¹:

Բռնկվում է առաջին աշխարհամարտը, և ինչպես սպասվում էր՝ արևմտյան ռազմաճակատին զուգահեռ բացվում է ռուս-թուրքական զորքերի երկրորդ՝ Կովկասյան ռազմաճակատը, որը 720 կմ երկարությամբ Սև ծովից ձգվում էր մինչև Ատրպատական:

Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության որոշմամբ հայ կամավորական զորախմբերը պետք է գործեին հիմնականում այն ուղղություններում, որտեղ կենտրոնացված էին ռուսական զորամիավորումները: Նախատեսվում էր զորքերի հարձակման չորս հիմնական ուղղություն. 1. Սարիղամիշից դեպի Ալաշկերտի հովիտ, 2. Կագիզմանից և Իգդիրից դեպի Ալաշկերտի հովիտ, 3. Իգդիր, Մակու, Բայազետ-Վան, 4. Ջուլֆա-Խոյ-Դիլիման-Բաշկալե-Վան:

Չորս գլխավոր ուղղություն, և այդ պատճառով թույլատրվեց կամավորական չորս զորախումբ, որոնցից յուրաքանչյուրը պիտի գործեր նախատեսված ուղղություններից որևէ մեկում:

1914 թ. հոկտեմբերի սկզբներին Յ. Ջավրիկի տանը տեղի ունեցած ժողովում, որին մասնակցել են Անդրանիկը, Սեպուհը, Յ. Արղությանը, Խ. Կարճիկյանը, Համազասպը և Մ. Արզումանյանը, որոշվում են կամավորական զորախմբերի գործելու ուղղությունները:

«Առաջին գումարտակը, գրում է Սեպուհը, պիտի ճակատեր Պարսկաստանի Սալմաստ գաւառի թրքական սահմանին վրայ, հրամանատարութեամբ Անդրանիկի: Երկրորդ գումարտակը պիտի ճակատեր Իգդիրի սահմանին վրայ, հրամանատարութեամբ Դոյոյի(Դրաստամատ Կանայեան):

Երրորդ գումարտակը պիտի գործեր Կաղզուանի գծի վրայ, հրամանատարութեամբ Համազասպ Սրուանձտեանցի:

Չորրորդ գումարտակը պիտի բռներ Սարի Գամիշի ճակատը, հրամանատարութեամբ Սեպուհի»²:

Թեպետ համաձայն ժողովի որոշման կամավորական չորրորդ զորախումբը պիտի առաջնորդեր Սեպուհը, սակայն նրա հրաժարվե-

¹ Տե՛ս Լեո, Թիւրքահայ գաղափարաբանութիւնը, հ. Բ, էջ 111:

² Սեպուհ, Էջեր իմ յուշերեն, հ. Ա, էջ 61-62:

լուց հետո հրամանատարությունը ստանձնում է Հայոց Ազատամարտի հանրահայտ գործիչ, բազմափորձ Քեռիմ(Արշակ Գաֆաֆյան)¹:

Հայկական կամավորական զորախմբերի հրամանատարներն առանց բացառության ողջունել են կամավորական շարժումը եւ մեծ հավատ ընծայելով ռուսական զենքի նկատմամբ՝ համոզված էին, որ ռուսական հզոր բանակը հայ կամավորների աջակցությամբ ի զորու է հեշտությամբ ջախջախել թուրքական բանակը և կարճ ժամանակահատվածում ազատագրել Արևմտյան Հայաստանը:

Կովկասյան ռազմաճակատում տեղի ունեցած մարտական գործողությունների ու կռիվներին հայ կամավորական զորախմբերի մասնակցության ուսումնասիրությունը հստակորեն պայացուցում է, որ որևէ գովասանքից վեր են հայ կամավորների անբասիր հերոսական գործողությունները: Կամավորական զորախմբերը լինելով ռուսական զորքերի առաջապահներ, մշտապես գործել են ռազմաճակատի ամենաշիկացած ու դժվարին հատվածներում:

Ամփստելի փաստ է. հայ կամավորական զորախմբերը իրենց հերոսական գործողություններով ծառայեցին ռուսական զենքի հաղթանակին, բայց չկարողացան իրականացնել կարևորագույնը՝ կանխել հայության Մեծ եղեռնը:

1916 թ. ռուսական զորքերի կողմից Արևմտյան Հայաստանի գրեթե ողջ տարածքը գրավելուց հետո, Կովկասի նոր փոխարքա Նիկոլայ Նիկոլակիչի օրոք ցարիզմի քաղաքական բառապաշարից ընդմիշտ անհետացավ «Հայաստանի ինքնավարություն» հասկացությունը: Ռուսական կայսրությունը հասել էր իր նպատակին. «Հայստանը մնացել էր առանց հայերի», ու դտարկված Հայաստանը, համաձայն նույն թվականին Անտանտայի տերությունների միջև կնքված գաղտնի համաձայնագրի, հայկական ինքնավար նահանգների փոխարեն ստեղծվելու էին Եփրատյան ու Տիգրիսյան կոզակություններ: Լուծարվում են, ինչպես արդեն նշվել է, մինչ այդ գլխավորապես ռուսական զենքի հաղթանակներին ծառայած հայ կամավորական զինախմբերը, որոնք այժմ ռուս իշխանություններին այլևս հարկավոր չէին:

Թիֆլիսում կայացած համախորհրդակցությունում խոսելով կամավորական զորախմբերի լուծարման պատճառների մասին՝ Նիկոլ Աղբալյանը վկայակոչում է հետևյալ ուշագրավ փաստարկները. «Կառավա-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 66-67:

րության թշնամանքը դեպի հայ կամավորներն ուներ մի այլ հիմնական պատճառ. այդպիսի մի զինական ուժ որոշ բարոյական կշռով չէր կարող հաճելի լինել բռնակալության: Այդ ուժը նկատվում էր իբրև մի վտանգ ապագայի համար: Ահա այդ էր պատճառը, որ կամավորների կատարած մի շարք փայլուն գործողություններն անտեսվում էին պաշտոնական մարմինների կողմից, չէին հրատարակվում, մի բան, որ խոր կերպով վիրավորանք էր հասցնում թե՛ մարտիկներին և թե՛ առհասարակ հայերի ազգային զգացմունքներին»¹:

Ազատագրվել էր Արևմտյան Հայաստանը, ու բնականաբար Ազգային Բյուրոն անհրաժեշտաբար պիտի որդեգրեր և գործեր տիրապետող կացությանը համահունչ մարտավարությամբ:

1. Որևէ կայուն երաշխիք չէր կարող լինել ապացուցելու, որ ռուսական զորքերի ներկայությունը հայկական ազատագրված տարածքներում լինելու էր հարատև ու մշտական: Բնավ չէր բացառվում, որ վաղ, թե ուշ, ռուսական զորամասերը, տարբեր հանգամանքների թելադրանքով, լքեին այդ շրջաններն ու հեռանային: Իսկ նման պարագայում ո՞վքեր և ի՞նչ ուժերով պետք է պաշտպանեին այդ շրջանները: Հայոց Ազգային Բյուրոյի որոշումը՝ Մուրադին ռազմաճակատի կարևորագույն հատվածներից մեկում գործուղելը, շատ ճիշտ էր և անհրաժեշտ:

Անհրաժեշտ էր առավելագույնս կայունացնել ու ամրապնդել ռազմաճակատը ի հաշիվ հայ զինվորների ու նախ և առաջ՝ թշնամու դեմ մարտնչելու տրամադրություններով համակված կամավորների: Արևմտայան Հայաստանի ազատագրված շրջաններում գործուղված գործիչների գլխավոր պարտականություններից մեկը հայ կամավորների հավաքա-գրումն էր ու հայկական մարտական ուժերի կազմակերպումը: Նրանց նախաձեռնությամբ և ղեկավարությամբ կազմավորվող մարտական ուժերը ոչ միայն պիտի աջակցեին ռուսական զորքերին՝ պաշտպանելու ռազմաճակատի անասանությունը թուրքական զորքերի հարձակումներից, այլև ապահովեին այդ շրջանների հայ բնակչության անվտանգությունը թուրք և քուրդ հրոսակախմբերի ոտնձգություններից:

¹ Բանբեր Հայաստանի Արխիվների, 1992, թիւ 1-2, էջ 84:

2. Հայոց Մեծ եղեռնից հետո առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում ազատագրված տարածքները վերստին հայ բնակչությանը վերաբնակեցնելու խնդիրը:

Թուրքական յաթաղանից փրկված հայերն աստիճանաբար վերադառնում էին իրենց բնակավայրերը: Հարկավոր էր բոլոր միջոցները գործադրել աջակցելու և արագացնելու նրանց վերադարձը և հնարավորության սահմաններում տանելի կենսական և բարերար պայմաններ ապահովել հայրենի բնօրրանում՝ վերադարձողների գոյատևման ու հաստատման համար:

3. Ձանգվածային ջարդերի հետևանքով, բնականաբար, փոխվել էր նաև այդ շրջանների մահմեդական և հայ բնակչության քանակական հաշվեկշիռն ու հարաբերակցությունը: Ինչպե՞ս պետք է դասավորվեր և ի՞նչ ուղղվածությամբ պետք է ընթանար նրանց փոխհարաբերությունը համատեղ բնակվելու դեպքում: Գիշտ է, այդ հարցի կարգավորումը գլխավորապես ցարական իշխանությունների և մասնավորապես՝ նույն ճակատում տեղաբաշխված ռուսական զորքերի հրամանատարության իրավասությունների մեջ էր մտնում, բայց հայերը նույնպես պետք է որոշակի ակտիվություն դրսևորեին և այդ ուղղությամբ համապատասխան քայլեր ձեռնարկեին:

Ազգային Բյուրոյի հաճնարարությամբ Արևմտյան Հայաստանի շրջաններում գործուղված գործիչների գործունեության առանցքներից մեկը հայ բնակչության խաղաղ գոյակցության ապահովմանը նպատակաուղղված աշխատանքներն էին: Այդ նպատակի կենսագործման համար նա պետք է պատշաճ ուշադրություն դարձներ մահմեդական բնակչության և մասնավորապես՝ քրդական ցեղախմբերի նկատմամբ ձեռնարկվող համապատասխան կապերի ու հարաբերությունների իրականացմանը միտված խնդիրների լուծմանը:

Հազարավոր հայեր թուրք ջարդարարներից մազապուրծ փոքրաթիվ խմբերով, իսկ շատ հաճախ միայնակ, տարբեր շրջաններից հավաքվում էին Երզնկա, Բաբերտ, Էրզրում: Այդ իրավիճակում առաջնահերթ խնդիրներից էր կենդանի մնացած հայերին փրկելը:

Այս գործում նե՛ծ աշխատանքներն էր ծավալել Հայոց Ազատամարտի նշանավոր գործիչներ, հատկապես «Մի հայ, մի ոսկի» ձեռնար-

կի նախաձեռնող Սեբաստացի Մուրադն ու նրա մարտական զինակիցներ Սեպուհն ու Կայծակ Առաքելը:

«Մենք,- գրում է Սեպուհը,- ունեցանք խորհրդակցութիւններ Մուրատի ու Կայծակ Առաքելի հետ՝ կանոնավորելու համար «մի հայ, մի ոսկի» ձեռնարկը: Այս մասին գրել տուիմք սրտառուչ կոչեր եւ դրկեցիմք Թիֆլիսի թերթերուն, որոնք հրատարակուեցան: Կոչերն ունեցան մեծ արդիւնք, որուն շնորհիվ կարելի եղավ դարձեալ փրկել քանի մը հազար հայեր»¹:

Այս առումով ավելի քան արդյունավեր է ու հիշատակելի՝ ռազմաճակատի Երզնկայի հատվածում գործող Սեբաստացի Մուրադի ծավալած գործունեությունը: Երզնկայում գտնվելու հենց առաջին իսկ օրից նա, փրկարար ջոկատների գլուխն անցած, թափանցելով թուրքերի եւ քրդերի բնակավայրերը, կարողանում է ազատել բազմաթիվ կանանց ու երեխաների: Օգտվելով Թիֆլիսի Հայոց Ազգային բյուրոյի ֆինանսական աջակցությունից՝ Մուրադը Կայծակ Առաքելի ընկերակցութամբ «Մէկ հայ, մէկ ոսկի» նշանաբանով կապեր է հաստատում քուրդ ցեղախմբերի եւ հատկապէս՝ Դերսիմի քրդերի ցեղապետների հետ: Քրդերի հետ հաստատված համագործակցությունը տալիս է իր դրական պտուղները. «Տերսիմի կողմից,- նշում է «Յուսաբեր»-ը,- այնտեղի քրտերը էշերի վրայ նստեցրած, բերում յանձնում են իրենց պատսպարած հայերին, որոնց, որպէս ճանապարհի ծախս վճարում էր իւրաքանչիւր բերուած մի հայի համար մօտ 12 ռուբլի»²:

Թուրք յաթաղանից փրկված հայերի վերադարձն իրենց բնօրրան աստիճանաբար մեծանում է: Մուրադի կողմից հետևողականորեն կենսագործվող «Մի հայ, մի ոսկի» ձեռնարկումն իր բարերար ազդեցությունն է գործում ոչ միայն Երզնկայի շրջանում:

«Փախստականներու վերադարձի գործին,- խոստովանում է Սեպուհը,- մեծապէս կը նպաստէին Երզնկայէն Մուրատ եւ Կայծակ Առաքելը «Մի հայ, մի ոսկի» ծանօթ ձեռնարկով»³:

Փետրվարյան հեղափոխությունից հետո իրավիճակը Կովկասի քաղաքական կյանքում և ռազմաճակատում կտրուկ կերպով փոխվում է:

¹ Սեպուհ, նշվ. աշխ., էջ 279:

² Յուսաբեր, 1916, յունիսի 6:

³ Սեպուհ, նշվ. աշխ., էջ 284:

Ցարիզմի տապալման և արևմտյան ճակատում գերմանական ու ավստրո-հունգարական բանակների կողմից ռուսական զորքերի պարտությունների արձագանքները թափանցելով կովկասյան ռազմաճակատ՝ հայրենիք վերադառնալու ցանկությամբ համակված ռուս զինվորների շրջանում ավելի խորացրին արմատավորված դասալքումների տրամադրությունները: Ռուսական զորաբանակներում նախկին մարտունակության և ռազմական կարգապահության փոխարեն արդեն նկատվում էին բարոյալքության ու ռազմաճակատը կազմալուծելու բացահայտ նշաններ:

Դեպքերի նման կտրուկ շրջադարձը դժվարին կացություն էր ստեղծել նաև ռուսական հրամանատարության համար, և ստեղծված ծանր մթնոլորտն անհրաժեշտաբար թելադրում էր դիմել վճռական միջոցների: Ռազմաճակատի մերկացումը փաստորեն իրական հնարավորություն էր ընձեռում թուրքերին, համալրելով բանակի մարտական կազմը, վերստին զավթելու ոչ միայն Արևմտահայաստանը, այլև Անդրկովկասը և օգտվելով ռուսական զորքերի բացակայությունից, առանց մեծ ջանքերի, իրականացնելու պանթուրքիզմի ծրագիրը, այն է՝ գրավել Բաքուն ու դուրս գալ Յուսիսային Կովկաս, ապա մինչև Բաշկիրիա, Թաթարիա և Միջին Ասիա: Ռազմաճակատը կայունացնելու համար անհրաժեշտ էին միմիայն կարգապահ ռազմական միավորումներ, իսկ այդպիսիք կարող էին լինել հայկական մարտական ուժերը, որոնք շահագրգռված էին պաշտպանելու Արևմտահայաստանն ու Անդրկովկասը:

Այդ օրերին Կովկասյան ռազմաճակատի զանազան ուղղություններից Թիֆլիս (այստեղ էր գտնվում Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարության ռազմակայանը - Յ.Գ.) առաքվող հեռագրում զորամիավորումների հրամանատարությունը, ներկայացնելով զինվորների զանգվածային դասալքության հետևանքով ճակատում ստեղծված անմխիթար ու անկառավարելի իրավիճակը, գլխավոր հրամանատարությունից խնդրում էին ազգային, գլխավորապես հայկական զորամասեր, առանց որոնց ստեղծված դժվարին իրավիճակում անհնարին էր կայունացնել և պաշտպանել ռազմաճակատի առկա բնագծերը, որոնք Սև ծովից ձգվում էին մինչև Պարսկաստան¹:

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 33, ք.10-13:

Ռազմաճակատը հնարավոր էր կայունացնել և ամրապնդել, եթե այնտեղ կենտրոնանային հայկական զորամասերը, որոնք շահագրգռված էին պաշտպանելու իրենց հայրենիքը: Հայկական զորամասերի կազմակերպման մասին պաշտոնական որոշումն ընդունվել է 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Թիֆլիսում կայացած Հայոց ազգային համախորհրդակցությունում, չնայած ի դեմս հայկական կամավորական զորախմբերի, այդ զորամասերի կազմակերպման հիմքերը, փաստորեն, դրվել էին դեռևս կամավորական շարժման սկզբնական շրջանում:

Սեպտեմբերի 26-ին տեղի ունեցած հերթական նիստերից մեկում, համաժողովի մասնակիցները անդրադառնում են նաև հայկական զորամասերի կազմակերպման հարցին ու թիվս մի շարք որոշումների, ընդունում են նաև հետևյալ որոշումը.

«Ճակատի ամրացումը:

Վերջին ժամանակներում զորքի մեջ նկատվող կազմալուծման նկատմամբ ժողովը գտնում է անհրաժեշտ կռվել դասալքության դեմ ընդհանրապես և հայ զինվորների մեջ մասնավորապես: Ներկա քաղաքական մոմենտը անհրաժեշտ է դարձնում հայկական զորամասերի կազմակերպումը, այդ զորամասերին հայկական շրջանները պետք է ցույց տան ամեն աջակցություն: Միևնույն ժամանակ, ի նկատի ունենալով սերտ կապը ճակատի և թիկունքի միջև, վերջինում անհրաժեշտ է կազմակերպել ժողովրդական միլիցիա, խոսքի ամենալայն իմաստով»¹:

Համաժողովի վերջում՝ հոկտեմբերի 9-ին ընտրվում է, դարձյալ բազմակուսակցական հիմունքով, Հայոց ազգային խորհուրդ, որը փոխարինելով Ազգային Բյուրոյին, որպես յուրօրինակ գործադիր մարմին, ստանձնում է հայության քաղաքական ղեկավարությունն ու առաջնորդի դերը: Նորընտիր Ազգային խորհուրդը բաղկացած էր 15 անդամներից, որոնցից վեցը(Ավետիս Ահարոնյան, Նիկոլ Աղբալյան, Արամ Մանուկյան, Ռուբեն Տեր-Մինասյան, Խաչատուր Կարճիկյան, Արտաշես Բաբալյան) Հ. Յ. Դաշնակցության անդամներ էին: Ազգային խորհրդի նախագահը Ավ. Ահարոնյան էր, իսկ քարտուղարը՝ Ն. Աղբալյանը: Ազգային խորհրդում, ինչպես նախկինում՝ Ազգային Բյուրոյում, գերիշխողը դարձյալ Դաշնակցությունն էր:

¹ Նույն տեղում, էջ 142:

Շարունակվում էր առաջին աշխարհամարտը, իսկ Կովկասյան ռազմաճակատն աստիճանաբար դատարկվում էր ու կազմալուծվում: Ինչպիսի՞ մարտավարություն պիտի որդեգրեր ու ինչպե՞ս պիտի գործեր Չայոց Ազգային Խորհուրդը պատմական այնպիսի ժամանակահատվածում, երբ ռազմաճակատում վատթարագույն ուղղվածությամբ տեղի ունեցող դեպքերի հերևանքով ջարդերի սուրը վերստին ծառայել էր Մեծ Եղեռնի ահավոր սարսափներն ապրած հայության վերջին բեկորների վրա:

Այդ իրավիճակում այլընտրանք գոյություն ունենալ չէր կարող, անհրաժեշտ էր գործել համընդհանուր ինքնապաշտպանություն կազմակերպելու մարտավարությամբ և հայության առողջ ուժերը նպատակաուղղել կազմավորելու հայկական կանոնավոր զորամասեր:

Առաջնորդվելով պատմական տվյալ ժամանակահատվածի հրամայականով և համաժողովի այդ որոշմամբ՝ նորընտիր Չայոց Ազգային Խորհուրդը հայկական զորամասեր կազմակերպելու թույլտվության նպատակով դիմում է Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարությանը և նրա միջոցով նաև Ռուսաստանի ժամանակավոր կառավարությանը:

Կերենսկու ժամանակավոր կառավարությունը ռազմաճակաի իրկան վիճակի թելադրանքով արդեն համոզվում է, որ ռուսական զորքերի նվաճած տարածքները թուրքական զորքերի հարձակումներից կարելի էր ապահովել միայն ազգային զորամասերի ուժերով: Ելնելով վերոհիշյալ նախադրյալներից՝ ժամանակավոր կառավարության թույլտվությամբ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությանը արտոնվեց կազմավորել ազգային զորամիավորումներ, որոնց թվում նաև հայկական երկու զորամասեր: 1-ին՝ 60000 թվակազմով բանակային կորպուսը նախատեսված էր կազմավորել ի հաշիվ արևմտյան ռազմաճակատում մարտնչող ավելի քան 250000 հայ զինվորների և հայկական կամավորական խմբերի: 2-րդ զորամիավորումը՝ Անդրանիկի գլխավորությամբ բացառապես արևմտահայերից կազմված աշխարհագորային դիվիզիան էր 30000 թվակազմով:

Չայկական զորամասերի կազմավորման գործում մեծ աշխատանք է ծավալել դեռևս 1917 թ. մայիսին ստեղծված Չայկական Ձինվորական Խորհուրդը (ՉՁԽ), որի պարտականությունն էր հայկական զորամասերի կազմավորումն ու նրանց գործունեության համադրումը: Ձինվորական

Խորհուրդը, որպես հայկական զորամասերի իրավական ներկայացու-
թյուն, ճանաչվեց Ռուսաստանի ժամանակավոր կառավարության և
Անդրկովկասի Կոմիսարիատի որոշմամբ:

Դժբախտաբար, հոկտեմբերյան հեղաշրջումից հետո ձախողվում է
հայկական զորամիավորումների կազմավորման գործը: Համաձայն
Հայոց Ազգային Խորհրդի և ժամանակավոր կառավարության միջև կա-
յացած համաձայնության, Արևմտյան ռազմաճակատից Կովկաս ժամա-
նող 50000 հայ զինվորները Ռուսաստանում բռնկված քաղաքացիական
կռիվների, ճանապարհների շրջափակման պատճառներով չեն
կարողանում հասնել Հայաստան:

Հայրենիք վերադարձող հայ զինվորների մեծ մասը քաղաքացիա-
կան կռիվների օրերին կարմիր բանակի հայազգի հրամանատարների
կոչով համալրելով նրանց իսկ գլխավորած զորամասերը՝ Ռուսաստա-
նի անձայրածիր տափաստաններում մարտնչում էին հանուն
Խորհրդային իշխանության հաղթանակի: Իսկ նույն ժամանակամիջո-
ցում Արարատյան աշխարհում խմբված հայության հիմնական զանգ-
վածը օրհասական պայքար էր մղում իր գոյությունը պահպանելու
համար:

Կարմիր հոկտեմբերի շնորհիվ տապալվեցին նաև հայկական ազգային
զորամիավորումներ ստեղծելու իրական հնարավորությունները: Կովկա-
սյան ռազմաճակատի հրամանատար գեներալ Լեբեդինսկու համաձայ-
նությամբ, այդ ճգնաժամային օրերին, հայ ժողովրդի գոյապայքարը ա-
ռաջնորդող միակ փաստական ուժը՝ Հայոց Ազգային Խորհուրդը, կարո-
ղացավ կազմել միայն 16000-18000 մատիկներից բաղկացած գեներալ
Թովմաս Նազարբեկյանի գլխավորած բանակային կորպուսը:

«1917 թ. դեկտեմբերին Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրա-
մանատարի թիւ.136 հրամանի համաձայն հիմք դրվեց հայկական
կորպուսի կազմավորմանը:

Փետրվարի 25-ին կորպուսի շտաբը տեղափոխվեց Ալեքսանդրապոլ:

... Մարտի 3-ին հայկական կորպուսի հրամանատար գեներալ Նազար-
բեկովը (այդ օրվանից արդեն Նազարբեկյան- Յ.Գ.) ռազմաճակատի

գլխավոր հրամանատար գեներալ Օդոշելիձեից ընդունեց ամբողջ ռազմաճակատի հրամանատարությունը»¹:

Գեներալ Նազարբեկյանի գլխավորած ազգային զորամասի մեջ էին մտնում Արեշյանի 1-ին, Սիլիկյանի 2-րդ և Անդրանիկի 3-րդ աշխարհազորային դիվիզիաներն ու գնդապետ Ղորղանյանի գլխավորած հեծյալ բրիգադը:

Հայոց Ազգային խորհրդի և Կովկասյան ռազմաճակատի հրամանատարության փոխհամաձայնությամբ բանակային կորպուսի զինվորական կոմիսարի պաշտոնը ստանձնում է Դրաստամատ Կանայանը (Դրո):

Սև ծովից մինչև Ուրմիա հսկայածավալ ռազմաճակատում հայ փոքրաթիվ նորաստեղծ գնդերին վիճակված էր դիմագրավելու թեև մի շարք ճակատամարտերում պարտված, բայց դեռևս զգալի հզորությամբ օժտված և հայ զորագնդերից անհամեմատ բազմաքանակ թուրքական զորամիավորումներին: Հարց է ծագում՝ կարո՞ղ էին արդյոք Հայոց փոքրաքանակ ուժերը պաշտպանել մի քանի հարյուր կիլոմետրի հասնող ռազմաճակատը:

Ինչպիսի՞ նարտավարությամբ պիտի գործեր Հայոց Ազգային խորհուրդն ու Հայկական բանակային կորպուսի հրամանատարությունը:

Ելնելով ռազմաճակատում տիրող իրական կացությունից և մարտական ուժերի հնարավորությունից՝ Դրոն առաջարկում է փոքրացնել, կրճատել ռազմաճակատը և մարտական ուժերը կենտրոնացնելով ավելի փոքր հատվածում՝ ստեղծել պաշտպանության հզոր հանգույց: Նրա համոզմամբ՝ եթե հայկական զորքերը չկարողանային պահել Էրզրումի ռազմաճակատը, ապա կկորցնեին ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև հարցականի տակ կդրվեր նաև Արևյան Հայաստանը:

Ազգային խորհուրդը որոշում է պահել ռազմաճակատը և Հայկական բանակային կորպուսի 3-րդ դիվիզիայի հրամանատար Անդրանիկին, որն ի դեպ Երզնկայից մինչև Վան և Բիթլիս ձգվող ռազմաճակատը պահպանելու ամենաջերմեռանդ կողմնակիցն էր, նշանակում է Կարինի երկրապահ ճակատի հրամանատար, այն համոզմամբ, որ նշանավոր հայդուկապետը, որն ի դեպ Կովկասյան ռազմաճակատի հրամա-

¹ «Բանբեր Հայաստանի Արխիվների», 1992. թիւ 3, էջ 35:

նատարության կողմից նոր էր ստացել գեներալ-մայորի զինվորական աստիճան, իր հեղինակությամբ և ռազմական կարողությամբ կկարողանա ոգեկոչելով զորքին ու ժողովրդին՝ պաշտպանել ռազմավարական վճռական նշանակություն ունեցող էրզրուն բերդաքաղաքը:

1918 թ. փետրվարին թուրքերը խախտելով Երզնկայի զինադադարը, անցնում են հարձակման: Չնայած հերոսական դիմադրությանը՝ հայկական փոքրաքանակ ուժերը չկարողանալով կայուն դիմադրություն ցույց տալ թուրքական զորքերին, թողնում են Բաբերդը, Երզնկան, Վանը, Բիթլիսը և վերջապես, Արևմտահայաստանի ամենակարևոր հենակետը՝ Էրզրունը: Ընդ որում՝ Էրզրունի մատույցներում և բուն բերդաքաղաքում հայկական զորքերի դիմադրությունը եղել է բավական անկազմակերպ եւ թույլ, եւ ինչպես նշում է գեներալ Յախվերդյանը. «... թուրքերը հեշտությամբ կարողացան գրավել բերդաքաղաքը, թերեւս միայն Մուրադին (նկատի ունի Սեբաստացի Մուրադին - Յ.Գ.) իր ձիավորներով հաջողվեց փոքր-ինչ զսպել թուրքերի ճնշումը...»:

Չկար այլևս Հայաստանի արևմտյան հատվածի վերջին պատվարը՝ Էրզրունի հզոր բերդաքաղաքը: Արևմտահայաստան տանող ուղիները արդեն բաց էին: Բացի ռազմաճակատում տիրող վատթարագույն կացությունից, հայությանը սպառնում էր մեկ այլ սարսափելի վտանգ:

Թուրքական զորքերի հարձակմանը զուգարնթաց՝ վաղօրոք մշակված ծրագրով, թուրք հրամանատարության կողմից Կովկաս գործուղված սպաների ու գործակալների հրահրմամբ, կովկասյան թուրքերը քուրդ հրոսակախմբերի համագործակցությամբ պարբերաբար հարձակումներ էին գործում հայկական բնակավայրերի ու հաղորդակցության կարևորագույն հանգույցների, մինչև անգամ ճակատ մեկնող զորամասերի վրա՝ ստեղծելով կատարյալ քառասյին և անկառավարելի իրավիճակ:

Հայոց Ազգային և Զինվորական Խորհուրդների որոշմամբ՝ 1917 թ. դեկտեմբերին Երևան է գործողվում Արամ Մանուկյանը և կազմավորում Ազգային Խորհրդի իրավունքներով օժտված մի մարմին՝ Երևանի Հատուկ կոմիտե, որի ձեռքում է կենտրոնանում նահանգի քաղաքական, տնտեսական և ռազմական իշխանությունը:

Այդ ժամանակ Երևանում էին գտնվում նաև Հայկական բանակային կորպուսի զինվորական կոմիսար Դրոն և Երևանի նահանգում կազմավորվող,

նույն կորպուսի 2-րդ դիվիզիայի հրամանատար գեներալ Սիլիկյանն ու նրա տեղակալ գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանը:

Այդ ժամանակահատվածում նրանց գործունեությունը գլխավորապես պիտի նպատակաուղղված լիներ կենսագործելու հետևյալ խնդիրները.

1. Հնարավորինս կանխել ազգամիջյան բախումներն ու հաստատել խաղաղ իրավիճակ:

2. Իրականացնել զորահավաքը և կազմակերպել կանոնավոր զորամասեր:

3. Կազմակերպել հայկական բնակավայրերի ինքնապաշտպանական ուժերն ու ապահովել հայ բնակչության անվտանգությունը:

4. Մահնդդական հրոսակախմբերի ու ավազակախմբերի հարձակումներից պաշտպանել բնակավայրերի ու դեպի ռազմաճակատը ձգվող հաղորդակցության ուղիներն ու ապահովել բնակչության անվտանգ երթևեկությունը:

5. Լուծել բազմաժողովրդականությանը բնակեցնելու ու սովամահությունից փրկելու խնդիրը:

Քանի որ ռուսական զորքերի կողմից Կովկասյան ռազմաճակատը լքելու պատճառով, նույն ռազմաճակատի հրամանատարությունը հարկադրված արտոնեց կազմավորել գեներալ Թովմաս Նազարբեկյանի գլխավորած Հայկական բանակային կորպուսը, ուստի Հայոց Ազգային Խորհրդի և կորպուսի հրամանատարության առջև ծառայած առաջնահերթ կարևորագույն խնդիրը, բնականաբար, պիտի լիներ նոր-նոր կազմավորվող զորամասերը զինվորներով համալրելը: Այդ նպատակով Երևանի Ազգային ու Զինվորական Խորհուրդների Հատուկ կոմիտեն 1917 թ. դեկտեմբերին հրապարակում է զինակոչ հայտարարելու մասին թիւ 1 հրամանը, համաձայն որի «Գաւառի, շրջանի, գիւղի 1886 թւի յունւարի մէկից մինչև 1898 թւի դեկտեմբերի երեսուն և մէկը ծնւած և 1907-1917 թւականներին զինակոչի ենթարկւած բոլոր հայ զինուորները՝ իսկական ծառայութեան մէջ եղածները, կարմիր ու կապույտ տոմսաւորները, սպիտակ տոմսաւորները(ստուգելու համար)՝ թէ նրանք, որոնք գործօն բանակումն են եղած ու ապա տուն դարձած, թէ թիկունքի աշխատանքների (ԿոՏՐՏՎՈ) մէջ գտնւողները, ժամանակաւորապէս արձակուրդ ստացածները, զանազան արտօնութիւններով ու պատրւաներով տանը նստածները պարտաւոր են ներկայանալ...»¹:

¹ ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 4, թ. 1:

Համաձայն այդ հրամանի՝ գյուղի, տեղամասի, գավառի կոմիսարներն ու միլիցիայի պետերը պարտավոր էին իսկույն ձերբակալել զորակոչից խուսափողներին ու դասալիքներին, հակառակ պարագայում՝ հրամանը չկատարելու դեպքում, խստագույնս պատասխանատվության կենթարկվեին¹:

Նույն ժամանակահատվածում Հայոց Ազգային խորհրդի միջնորդությամբ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը 1918 թ. հունվար-փետրվար ամիսներին արտոնում է կազմավորել հայկական զորամասեր, որոնք, ի տարբերություն ռազմաճակատում մարտնչող զորամասերի, բացառապես ինքնապաշտպանական նպատակներ էին հետապնդում: Ձորամասերի համալրումը, զինումն ու հանդերձավորումը կատարվում էին գլխավորապես Հայոց Ազգային խորհրդի և Ձինվորական խորհրդի միջոցներով ու նախաձեռնությամբ:

Ռազմաճակատում վատթարագույն ուղղվածությամբ զարգացող մարտական գործողություններին զուգընթաց՝ թիկունքում շարունակաբար կրկնվող թուրք զինված խմբերի ելույթներն իրենց բնակավայրերին էին գամել զենքի ընդունակ հայերին, որոնք Արևելահայաստանի տարածքում ծայր առած զինված բախումների ճնշման տակ առավելապես մտահոգված էին իրենց բնակավայրերի, ընտանիքների ու հարազատների ապահովության պահպանմամբ: Թուրք հրամանատարության նախաձեռնությամբ արյունակիցների միջոցով Հայաստանի շրջաններում ստեղծված քաոսային կացությունն իր սև գործը կատարեց: Ռազմաճակատից իրենց ընտանիքների ճակատագրով տագնապած բազմաթիվ հայ զինվորներ լքում էին զորամասերը և վերադառնում հարազատ վայրերը: Հայ զորագնդերում ծնունդ առած զանգվածային դասալքումներն ու տիրապետող անկազմակերպ վիճակը կարող էին ամենաողբերգական հետևանքներն ունենալ:

Երևանի ողջ նահանգը վերածվել էր թուրք զինված ջոկատների ռազմական գործողությունների թատերաբեմի: Այդ օրերին Անդրկովկասյան կոմիսարիատն ու Հայոց Ազգային խորհուրդը պարբերաբար Հայաստանի տարբեր շրջաններից ստանում էին բազմաթիվ բողոք-հեռագրեր, որոնցում հայ բնակչությունը ցասումով հայտնում էր թուրք զինված խմբերի և զորքերի միջև տեղի ունեցած բախումների և

¹ Տե՛ս նույն տեղում:

հայկական բնակավայրերում ու հաղորդակցության հանգույցներում թուրքերի կողմից գործած վայրագությունների մասին¹:

Ռազմաճակատի բախտը, հետևաբար և հայ ժողովրդի գոյության խնդիրը մեծապես կախված էր նաև թիկունքում Արարատյան աշխարհում, ծավալվող իրադարձությունների հետագա ընթացքից:

Ռազմաճակատում տիրող անմխիթար իրավիճակը հրամայաբար պահանջում էր անհապաղ բացել թուրք զինված խմբերի կողմից շրջափակված ուղիները և թիկունքում կազմավորվող զորամիավորումները հասցնել մարտադաշտ՝ համալրելու թուրքական բանակի դեմ մարտնչող հայկական զորագնդերը:

Երևանի նահանգում տեղի ունեցող դեպքերը տեղում ուսումնասիրելու և համապատասխան քայլեր ձեռնարկելու նպատակով Կովկասյան կառավարության հրահանգով մի պատվիրակություն է գալիս Երևան:

«... հայկական զորքերի կոմիսար Դրօն յայտարարեց, որ բոլոր ռազմագիտական ճանապարհները փակուած են հայկական զորամասերի առջև: Նա վճռական ու յամառ կերպով պահանջում էր, որ իրեն ցոյց տրուի որևէ ճանապարհ, թէկուզ շատ վատ ու անյարմար, թէկուզ ամենաանցանկալի մի ճանապարհ: Այդ պահանջին նրան պատասխանուեց, որ ռազմագիտական բոլոր ճանապարհները փակուած են ռազմաճակատ գնացող հայ զորամասերի առջև: Մահմեդականների ներկայացուցիչները չառարկեցին»²:

Թուրք զինախմբերի ելույթներն ավելի ու ավելի էին ծավալվում Ղաճարլուի (Արտաշատ) և Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի և այլ շրջաններում ու սպառնում էին մոտենալ Երևանին: Այլևս հապաղելու և թուրքերի հետ անիմաստ բանակցությունները վարելու ժամանակ չկար: Ելքը միակն էր:

«Երևանի զինուորական կոմիսար Դրօն պահանջեց գծի ապահովութիւնը Կովկասեան Սէյմի հաշտարար ներկայացուցիչներից, եւ սպառնաց մերժման դէպքում զէնքով բաց անել այդ»³:

Կրկնակի անգամ թուրքերի հետ բանակցելու անհաջող փորձից հետո, փետրվարի 22-ին, Դրոն՝ Ուլուխանլուում կենտրոնացած թուրքական զո-

¹ «Հայրենիք» օրաթերթ, 1918, հուլիսի 13:

² Վրացեան Ս., «Հայաստանի Հանրապետութիւն», Թեհրան, 1982, էջ 124-131:

³ Նույն տեղում:

ռախմբերի դիրքերին գրոհի է նետում 3-րդ պարտիզանական և 4-րդ գնդերը: Տվյալ պարագայում զենքի ուժով Ուլուխանլու կայարանը գրավելը՝ միակ միջոցն էր վերականգնելու կարևորագույն նշանակություն ունեցող Երևան-Ալեքսանդրապոլ երկաթուղին:

Հարձակումից մի քանի ժամ չանցած թուրքերը ի նշան հնազանդության պարզում են սպիտակ դրոշը:

Քանի որ թուրքերի զինված ելույթները միաժամանակ բռնկվում էին տարբեր վայրերում, ուստի հայկական մարտական ուժերը հարկադրված գործել են մեծ արագությամբ: Հայկական զորախմբի վճռական գործողությունների շնորհիվ կտրուկ կերպով փոխվում է օրեր առաջ Հայոց Ազգային Խորհրդի, Արամի և Դրոյի խաղաղության կոչերն ու առաջարկություններն արհամարհող թուրքերի զինված ելույթների կազմակերպիչների դիրքորոշումը: Այսրկովկասյան Սեյմը (Անդրկովկասի հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմինը՝ պառլամենտ - Յ.Գ.) արդեն այս անգամ հեղեղվում է հայ զինվորների հարվածներից սարսափի մատնված թուրք առաջնորդների կողմից ուղարկված բողոք-հեռագրերով:

Սեյմի մի շարք անդամներ և հատկապես մահմեդական պատգամավորները բացարձակապես անմեղ ձևանալով՝ մեղադրանքների շարան են տեղում հայերի հասցեին:

«Նրանք իրար յետեւից բարձրանում էին ամբիոնը եւ արտասանում ցասունով լի, կրքոտ ճառեր՝ ուղղուած հայերի ու դաշնակցութեան դէմ: Ամբողջ պատասխանատուքիւնը, նրանց կարծիքով, ընկնում էր հայերի վրայ, որոնք բռնի միջոցներով ձգտում էին ստեղծել «հայկական հողամաս»: Հայկական զօրամասերը չեն ենթարկւում կենտրոնական իշխանութեան (նկատի ունի Կովկասյան Սեյմը ու կոմիսարիատը -Յ.Գ.) եւ փոխանակ ռազմաճակատ մեկնելու՝ կռւում են խաղաղ ազգաբնակչութեան դէմ: Երևանի դէպքերի հեղինակները Դրօն, գնդ. Փիրումեանն ու մի շարք ուրիշ հայ զինուորականներն ու գործիչներն են: Անհիմն է այն ամբաստանութիւնը, թէ մահմեդականները փակոււմ են ճանապարհը հայ զօրամասերի առջեւ եւ այլն, եւ այլն»¹:

Ահա Կովկասյան իշխանությունների և նրա կողմից ընդհարումների պատճառներն ու ուղղվածությունը տեղերում ուսումնասիրելու նպա-

¹ Ս. Վրացեան, «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 135:

տակով Հայաստան ուղարկված «հաշտարարների» հանձնաժողովի աշխատանքների արդյունքի մի պերճախոս վկայություն: Թուրք բնակչության զիված ելույթները մարելու միակ միջոցը գենքն էր:

Շնորհիվ հայ մարտական ուժերի անբասիր գործողությունների, մարում են թուրք հրոսակախմբերի զինված ելույթներն ու բացվում թիկունքը ռազմաճակատին, ինչպես նաև բնակավայրերը միմյանց կապող հաղորդակցության ուղիները: Թիկունքի խաղաղեցումը հնարավորություն է ընձեռում հաջողությամբ իրականացնել զորահավաքն ու շարունակել համալրել Արարատյան աշխարհում կազմավորվող Հայկական բանակային կորպիսի գեներալ Սիլիկյանի գլխավորած 2-րդ դիվիզիայի մարտաշարքերը:

Եթե ընդհանրացնենք և անաչառորեն արժևորենք Արարատյան աշխարհում Երևանի Ազգային Խորհրդի (Հատուկ Կոմիտե) ու զինվորական գործիչների գործունեությունը, ապա կարելի է անվարան հաստատել, որ խորագետ քաղաքական գործիչ, տաղանդավոր կազմակերպիչ Արամ Մանուկյանի և մարտական երկաթյա կարգապահությամբ օժտված աննկուն հրամանատար Դրոյի և գեներալ Սիլիկյանի համագործակցությունը Արարատյան աշխարհում տվեց իր արգասաբեր պտուղները: Նրանց, ինչպես նաև Երևանի Հատուկ Կոմիտեի մյուս անդամների ջանքերով հնարավոր եղավ լուծել թերևս ամենահրատապ խնդիրը. մարել Հայաստանի տարածքում բռնկված թուրք զինախմբերի զանգվածային ելույթները և ապահովել թիկունքը ռազմաճակատին միացնող ուղիների անխափան աշխատանքը: Բացի վերոհիշյալից, Երևանի Հատուկ Կոմիտեն Հայաստանում տիրող ճգնաժամային պայմաններում կարողացավ Արարատյան աշխարհում կազմավորել նոր զորամիավորումներ, որոնք անգնահատելի ծառայություն ունեցան հայության գոյապայքարի մարտերում:

Չնայած թիկունքում ձեռք բերած հաջողություններին՝ ռազմաճակատում ծավալվող գործողությունները հետզհետե ավելի ու ավելի սպառնալի կերպարանք էին ստանում: Ապրիլի 12-ին Կովկասյան կառավարության նախագահ Չխենկելին և ռազմական նախարար գեներալ Օդոշելիձեն առանց Հայոց Ազգային Խորհրդի և կառավարության հայ նախարարների գիտության հրամայում են հայկական զորքերի հրամանատար գեներալ Նազարբեկյանին (նա անմիջականորեն են-

թարկվում էր Կովկասյան կառավարությանը և ռազմական նախարարությանը - Յ.Գ.) թուրքերին հանձնել Կարսի հզոր բերդաքաղաքը:

Կատարվում է ամենասարսափելին. «... Կարսի բերդը, - նշում է ռազմական նախարարությանը հասցեագրված հեռագրում հայկական բանակային կորպուսի շտաբի պետ գեներալ Վիշինսկին, - անտարակոյս, յետ կը մղեր թուրքերին. այսօր էլ դեռ բերդը շատ լաւ պաշտպանում էր. մինչև որ ստացուեց վարչապետ Չխենկելիի եւ զօր. Օդոշելիձէի կարգադրութիւնը, որ բանագնացներ ուղարկուեն՝ ճշտելու համար բերդի դատարկման պայմանները: Այս բանը բերդապետին յայտնելուց յետոյ՝ կռիւը դադարեց: Ջօրքերը՝ ենթարկուելով հրամանի՝ հեռացան Աղաջ-Աղբաբա-Յարան Վարդան առաջավոր դիրքերից...»¹:

Ծիշտ է, Թուրք հրամանատարությունն առանց որևէ կրակոցի գրավեց հզոր բերդաքաղաքը, սակայն նրանց նպատակը բոլորովին էլ միայն Կարսը չէր: Խախտելով Կովկասյան կառավարության հետ կնքված ապրիլյան զինադադարը՝ թուրքերը անսպասելիորեն վերսկսում են հարձակումը և գետնացելով Արփաչայը մոտենում Ալեքսանդրապոլին ու վերջնագիր ներկայացնում հայկական բանակի հրամանատարությանը:

Դատելով տվյալ ժամանակահատվածում ռազմաճակատում տեղի ունեցած դեպքերի ընթացքը բնութագրող սկզբնաղբյուրների, վավերագրերի, հուշագրությունների բովանդակությունից և հայկական զորքերի հրամանատար գեներալ Նազարբեկյանի ու մյուս հրամանատարների որոշումներից ու փոխհարաբերություններից՝ պիտի նշել, ու հայկական զորքերի անհաջողությունները պայմանավորված էին ոչ թէ նրանց փոքրաքանակությամբ ու վատ զինվածությամբ, այլ հրամանատարության կիրառած թույլ, ոչ կենսունակ մարտավարությամբ ու անվճռականությամբ: Թուրք հրամանատարությունը, օգտվելով հայկական զորքերի հրամանատարության որդեգրած սոսկ պաշտպանողական բնույթի մարտավարությունից ու նահանջելու տրամադրվածությունից, կարողանում է արագորեն վերախմբավորել ուժերը և անսպասելի ու հուժկու հարձակումներ ձեռնարկել ռազմաճակատի մեկ այս, մեկ այն հատվածում:

Յայկական բանակային կորպուսի հրամանատարության համար միանգամայն անսպասելի էին Կարսի անկումից հետո թուրքական

¹ ՀԱԱ, ֆ. 121, ց.2, գ. 42, ք. 6-12:

գորքերի արագ հարձակումները Ալեքսանդրապոլի վրա: Հայկական գորքերը, չհասցնելով ինչպես հարկն է նախապատրաստվել ու բավարար մարտական պատրաստվածության հասցնել մարտաշարքերը, գրեթե առանց դիմադրության քաղաք-ամրոցը հանձնում են հակառակորդին ¹:

Ռազմաճակատում ձեռք բերած հաղթանակներից հետո, թուրք հրամանատարությունն իր գորքերը բաժանելով չորս զորախմբերի՝ հարձակումը զարգացնում է հետևյալ ուղղություններով.

1. Առաջին զորախումբը (Մյուրսել բեյի գլխավորած 5-րդ դիվիզիան), նպատակ ունենալով գրավելու Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը, հարձակվելու էր Վորոնցովկայի (Կալինինո) ուղղությամբ դեպի Բոլնիս-Խաչեն, Բորչալու, ուր պետք է միանար Ղազախից դեպի Թիֆլիս շարժվող թուրքական զորքերին:

2. Երկրորդ զորախումբը (Ջամիլ-Ջավադ բեյի գլխավորած 11-րդ դիվիզիան) պետք է հարձակում գործեր Ջաջուռ-Համամլու-Ղարաքիլիսա-Ղազախ-Ելիզավետպոլ ուղղությամբ և միանալով այդ շրջանների թուրք զինյալ խմբերին՝ շարժվեր դեպի Բաբու:

3. Երրորդ զորախումբը (Էսադ փաշայի 9-րդ դիվիզիան) հարձակվելու էր Ալեքսանդրապոլ-Համամլու-Բաշ-Ապարան ուղղությամբ: Այդ զորախմբի նպատակն էր արագորեն անցնել Ապարան-Աշտարակ կամ Ապարան-Եղվարդ գիծը և մոտենալով Երևանին՝ շրջափակման մեջ վերցնել Երևանյան զորախումբն ու անհրաժեշտության դեպքում փակեր Հրազդան-Սևան ձգվող նահանջի ուղիները:

4. Չորրորդ զորախումբը (8-րդ դիվիզիա) Ալեքսանդրապոլից հարձակվելու էր դեպի Սարդարապատ²:

Իր գորքերը բաժանելով մի քանի խմբավորումների՝ թուրք հրամանատարությունը ծրագրում է տարբեր ուղղություններից տեղացող հարվածներով գրավել Երևանն ու արագորեն հայերի հետ մեկընդմիջտ հաշիվները մաքրելուց հետո ձեռնամուխ լինել իրենց գլխավոր նպատակի կենսագործմանը:

¹ Նույն տեղում:

² Տե՛ս Ա. Հարությունյան, «Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները», Երևան, 1984, էջ 174:

Գեներալ Ղորղանյանի գնահատմամբ՝ «...1918 թ. ամռանը, թուրքական բանակի գործողությունների նպատակը, թուրքական հրամանատարության պլանի եւ գերմանական գլխավոր շտաբի ցուցումների համաձայն, Կովկասյան ճակատում անգլիական բանակի աջ թեւի ոչնչացումն էր Մուսուլում եւ Բաքվի շրջանի գրավումը: Քանի որ Հայաստանը ներքաշված էր պարսկական Ադրբեջան եւ Բաքու տանող ճանապարհներին տեղի ունեցող մարտական գործողություններում, նրա գրավումը եւ նրա բանակային կորպուսի ոչնչացումը թուրքերի համար անհրաժեշտություն էր...»¹:

Սակայն ինչպես ապացուցեց ժամանակը, թուրքերն իրենց հաշիվների մեջ այս անգամ արդեն չարաչար սխալվում էին: Եթե մինչ այդ թուրք հրամանատարությունը գործում էր առավել ճկուն և գործուն մարտավարությամբ, ապա այս պարագայում թերագնահատելով հայկական զորքերի հնարավորությունները, զուտ մարտավարական առումով մասնատելով իր ուժերը՝ ընդունում է սխալ, չկշռադատված որոշում: Ի պատիվ հայկական զորքերի հրամանատարության, պիտի ասել, որ այս անգամ կարողանում է լավագույնս օգտվելով հակառակորդի թույլ տված վրիպումից, վճռում դիմագրավել ու ջախջախել տարբեր ուղղությամբ առանձին-առանձին հարձակվող թուրքական դիվիզիաները:

Համաձայն գեներալ Սիլիկյանի վկայության՝ իր հրամանատարությամբ գործող Երևանյան զորախումբը բաղկացած էր հետևյալ զորամասերից.

1. Պարտիզանական գունդը՝ հրամանատար գնդապետ Պերեկրեստով.
2. Պարտիզանական հեծյալ գունդը՝ հրամանատար փոխգնդապետ Կորոլկով.
3. Վանի առաջին գունդը՝ հրամանատար գնդապետ Յուզբաշև.
4. Վանի երկրորդ գունդը՝ հրամանատար գնդապետ Չախմախչև.
5. Երկրորդ հեծյալ գունդը (Քանաքեռ)՝ հրամանատար գնդապետ Չալինյան.
6. Վեցերորդ գունդը (Ղամարլու)՝ հրամանատար գնդապետ Դոլուխանով.
7. Չորրորդ գունդը (Վաղարշապատ)՝ հրամանատար գնդապետ Հովսեփյան.

¹ «Սարդարաբատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա», Երևան, 1998, էջ 114:

8. Հրետանային բրիգադ.

9. Կամավորական խմբեր:

Բացի դրանցից, Վանից և Խնուսից նահանջող որոշ ստորաբաժանումներ գալիս էին Երևանի կողմերը¹:

Գեներալ Սիլիկյանը, իր նամակներում թվարկելով զորամասերի տեսակները, համարներն ու հրամանատարներին, չի անդրադառնում նրանց թվակազմին: Այս հարցին առնչվող հրապարակումներից պարզվում է, որ Երևանյան զորախումբն ունեցել է հետևյալ թվակազմը. «... մօտաւոր հաշուով, զօր. Սիլիկեանի զօրքի քանակը, այդ օրերին, հասնում էր 10000 հոգու՝ բաղկացած հետևյալ մասերից, 4-րդ գունդը՝ 1500 սուլին, 5-րդ գունդը՝ 800 սուլին, Պարտիզանական առաջին գունդը՝ 1200, Երզնկայի գունդը՝ 700, Մակուի գունդը՝ 300, սպայակոյտի պարետի գումարտակը՝ 200, Վանի առաջին եւ երկրորդ գնդերը՝ 2500 սուլին, երկրորդ ձիաւոր գունդը՝ 700, Ձէյթունի ձիաւոր գունդը՝ 500, Սմբատի, Դալի Ղազարի, Մուրատի խմբերը՝ 500 ձիաւոր, եւ չորս մարտկոց 16 թնդանօթներով»²:

Երևանյան զորախմբի այս թվարկած զորամասերին պետք է գումարել նաեւ Ղամարլուում (Արտաշատ) տեղաբաշխված գնդապետ Դոլուխանյանի 6-րդ գունդը՝ 1800 սվին, գնդապետ Սակինի գումարտակը՝ 400 սվին, որոնք մայիսի 23-ին և 25-ին տեղափոխվեցին Բաշ-Ապարանի ճակատ ու հրետանային ևս երկու մարտկոց:

Հայկական բանակային կորպուսի հրամանատարությունը իր հարամանատարության ներքո ունենալով վերոհիշյալ մարտական ուժերը, այս անգամ կռիվներ վարելու մարտավարությամբ գերազանցում է հակառակորդին և դրսևորելով անխորտակ կամք ու կռիվներ վարելու վարպետություն՝ բախտորոշ նշանակություն ունեցող հաղթանակներ է տոնում Սարդարաբատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերում:

Մայիսյան հերոսամարտերը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի միասնության և անպարտ ոգու դրսևորման հիասքանչ օրինակներ են, որոնց ծնունդն ու արդյունքն էր Հայաստանի Հանրապետությունը: Հարյուրամյակներ շարունակ ազգային պետականութ-

¹ Ա. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 182, նաև ՀԱԱ, ֆ. 45, «Սիլիկովի նամակները Նազարբեկովին»:

² «Հայրենիք» ամսագիր, 1925, մայիս, Մելիքեան «Արեան ճանապարհով»:

յունը կորցրած հայությունը անպատմելի արհավիրքների ու հերոսական մաքառումների գնով ձեռք բերեց իր հայրենի փոքրիկ հողակտորում գոյատևելու, ազատ ու անկախ ապրելու իրավունքը:

Ընդհանրացնելով պիտի փաստել, որ հայ ազգային-ազատագրական պայքարն ու նրան առաջնորդող ազգային-քաղաքական կուսակցություններն առաջնորդվելով ժամանակաշրջանի յուրահատկություններով և իրենց հնարավորություններով ու կարողություններով, որդեգրել են տարբեր բնույթի մարտավարություն: Ճիշտ է, մարտավարության, պայքարի ձևերի ու եղանակների փոփոխությունը շատ հաճախ չի հանգեցրել ցանկալի արդյունքների, սակայն պատմական այդ ժամանակահատվածի օբյեկտիվ վերլուծությունն ու սկզբնաղբյուրների, հուշագրությունների անկողմնակալ մեկնաբանությունն աներկբա մատնանշում է, որ հայ ազատագրական պայքարը հարուստ է հերոսական ու արժանահիշատակ էջերով: Իսկ առավել արժեքավոր և ուշագրավ էջերն անկասկած կազմում են այն հերոսամարտերը, որոնք մղել են հայդուկապետերից հայկական կամավորական զորախմբերի հրամանատարներ դարձած հայրենաշունչ ֆիդայիները: Անկասկած բազում մարտերում կոփված ֆիդայիների անգնահատելի մարտական ավանդույթներն էին, որոնք մեծապես պայմանավորեցին հայ ժողովրդի ազգային- ազատագրական պայքարի մեծագույն նվաճումը՝ 1918թ. Մայիսյան հերոսամարտերում հայկական կանոնավոր զորագնդերի տոնած հաղթանակներն ու Հայոց անկախ պետականության(Հայաստանի Հանրապետություն) վերականգնումը:

Գևորգյան Համլետ Մարտիկի

**ՀԱՅ ԱԶԱԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿՋՔԻՆ**

Геворгян Гамлет Мартикович

**ВАПРОСИ ТАКТУКИ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ
БОРБЫ АРМЯНСКОГО НАРОДА В КОНЦЕ 19-ГО И В НАЧАЛЕ 20-
ГО ВЕКОВ**